



Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ՈՒՐԲԱԹ, 26 ՄԱՅԻՍԻ 2017Թ.
№ 20 (438)

**Մեր մով սարերում ամռան
առավոտ,
Մի դախարա ճեսա
կաթնադրյուրի մոտ,
Իջել եր ձորե մթին
անճատից
Ու ջուր եր խմում զուլալ
աղբյուրից:**
ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏ



Նախագահի նստավայրում ՀՀԿ-ի եւ ՀՀԴ-ի միջեւ ստորագրվել է քաղաքական կոալիցիա կազմավորելու մասին հուշագիր

Հանրապետության նախագահի նստավայրում մայիսի 11-ին Հայաստանի հանրապետական կուսակցության եւ Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության միջեւ ստորագրվել է քաղաքական կոալիցիա կազմավորելու մասին հուշագիր, որը կգործի մինչեւ 6-րդ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ավարտը:

Քաղաքական վերոնշյալ երկու ուժերը կոալիցիոն հուշագրով քաղաքական պատասխանատվություն են ստանձնել կառավարության ողջ գործունեության համար: Ստորագրված փաստաթղթում ամրագրված են քաղաքական կոալիցիայի շրջանակներում համագործակցության ռազմավարական նպատակները, կոալիցիայի առաջնահերթությունները, գործունեության եւ

կազմակերպման կարգը: Հայաստանի հանրապետական կուսակցության կողմից փաստաթուղթը ստորագրել է ՀՀԿ նախագահի տեղակալ Արմեն Աշոտյանը, Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության կողմից՝ ՀՀԴ Գերագույն մարմնի ներկայացուցիչ Ալվան Վարդանյանը:

էջ 5

Կադրային խեղկապակություններ Սյունիքի բուժական հաստատություններում

Նամակ ՀՀ առողջապահության նախարարի պաշտոնակատար Լեւոն Ալթունյանին

Հարգելի պարոն Ալթունյան
Սյունիքի մարզի առողջապահական հաստատություններում տեղի են ունենում իրադարձություններ, որոնք իսկապես արտառոց են ու կասկածելի, որոնց բուն էությունը հասկանալու համար, մարզի բազմաթիվ բժիշկների ու բնակիչների անունից, Ձեզ ենք դիմում՝ ակնկալելով անկեղծ եւ ողջամիտ պատասխան:

Կարող էինք, անշուշտ, մտահոգող հարցերի պատասխանը ստանալու համար դիմել Սյունիքի մարզպետարան կամ տարածաշրջանային բժշկական կենտրոններ, բայց դա անօգուտ եւ անիմաստ փորձ կլիներ, քանզի եւ մարզպետարանում, եւ բժշկական կենտ-

րոններում խստագույնս արգելված է լրատվամիջոցների հարցերին պատասխանելը: Եվ այսպես՝ մայիսի 23-ին Կապանի բժշկական կենտրոնի տնօրենի հերթական պաշտոնակատարին ներկայացնելիս հայտարարվեց, որ ՀՀ կառավարության որոշմամբ Կապանի եւ Քաջարանի բժշկական կենտրոնները միավորվել են՝ կառավարությունն իբր այդպես է նպատակահարմար գտել:

Ձեք ուզում մտածել, որ այդ հայտարարության հեղինակները ստել են, եւ փորձեցինք գտնել կառավարության այն որոշումը, որի համաձայն իրականացվում է երկու հիվանդանոցի միավորումը, որում, հավանաբար, նշված կլինի դրանց միավորման նպատակահարմարությունը: Եվ նման որոշում չգտանք...

Դուք կարող եք մեզ ասել, թե կառավարության որ որոշմամբ է տեղի ունենում Կապանի եւ Քաջարանի հիվանդանոցների միավորումը



(Եթե, իհարկե, միավորումն իսկապես տեղի է ունենում), չէ՞ որ խոսքը փակ բաժնետիրական ընկերությունների մասին է, իսկ դրանք լուծարվում, վերակազմավորվում են միայն հանրապետության կառավարության որոշմամբ:

էջ 3

Եվրոպայի օրը՝ Կապանում եւ Գորիսում

Եվրոպայի օրվա ամենամյա փոնակա-տարությունները, որ այս փարի ընթացում են «Եվրոպական միությունը Հայաստանի համար» խորագրով, անց են կացվում մայիսի 6-27-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի մարզերի վեց քաղաքում եւ մայրաքաղաք Երևանում: Մրանք ներառում են փեդեկատվական միջոցառումներ, որոնց ընթացքում ներկայացվում են ԵՄ-Հայաստան սերտ համագործակցությունն ու գործընկերությունը եւ եվրոպական մշակույթի բազմազանությունը:

Մայիսի 19-ին՝ Կապանում, իսկ 20-ին՝ Գորիսում անցկացված Եվրոպայի օրվա տոնակատարությունները, բացի տեղեկատվական ցուցահանդեսներից, ներառում էին նաեւ մշակութային միջոցառումներ, տարատեսակ մրցույթներ: Նախքան Կապանի Գարեգին Նժդեհի, Գորիսի Գրիգոր Տաթևացու անվան հրապարակներում տոնական միջոցառումների մեկնարկը Հայաստանում ԵՄ դեսպան Պյոտր Ավիտալսկին՝ Գորիսում, իսկ Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավարի տեղակալ Գրեգորի Ցուրիսը՝ Կապանում, հանդիպեցին Գորիսի համայնքապետ Վաչագան Արուսի եւ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի հետ՝ քննարկելով համագործակցության շրջանակները:

Ինչպես նշեց Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավարի տեղակալ Գրեգորի Ցուրիսը, այս տոնը խորհրդանշում է այնպիսի համընդհանուր արժեքներ, ինչպիսիք են՝ խաղաղությունը, համերաշխությունը, միասնությունն ու արդարությունը: Նա տեղեկացրեց, որ ԵՄ-ն մեծապես աջակցում է Հայաստանի Հանրապետության համաչափ տարածքային զարգացմանը: Պաշտոնական համագործակցության շրջանակներում վերջին տարիներին ավելի քան 500 մլն եվրո ֆինանսավորում է տրամադրվել տարբեր ոլորտների զարգացման ուղղությամբ՝ ենթակառուցվածքների, տնտեսական, տուրիզմի զարգացում, փոքր, միջին ձեռնարկատիրության աջակցություն, քաղաքացիական հասարակության ձեւավորում եւ այլն: «Մենք ցանկանում ենք շարունակել համագործակցությունը Հայաստանի եւ մասնավորապես այնպիսի քաղաքների հետ, ինչպիսիք են՝ Կապանը: Այս պահին Սյունիքի մարզում ԵՄ աջակցությամբ իրականացվում են ավելի քան 10 մլն եվրո արժողությամբ ծրագրեր, որոնցից մի քանիսը բավականին կարեւոր են եւ իրականացվում են նաեւ Կապանում: Հայաստանում իրականացվող մարզերի համաչափ զարգացման ծրագրի շրջանակներում մարզում իրականացվում են պիլոտային ծրագրեր, որոնցից մեկն էլ վերաբերում է օրինակելի կանաչ տնտեսության ստեղծմանը, այսինքն՝ այն օրինակ կծառայի նաեւ ՀՀ այլ մարզերի համար», - նշեց Գ.Ցուրիսը եւ հավելեց, որ այս պահին յուրաքանչյուրը հնարավորություն ունի մասնակցել մի շարք դրամաշնորհային նախաձեռնությունների տարբեր ոլորտներում՝ զբոսաշրջություն, կրթություն, մշակույթ, սպորտ, տնտեսական զարգացում, երիտասարդների հետ համագործակցություն

էջ 3

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ. «Չեմ հիշում, թե երբեւէ Ձեր թերթն ինձ նման հարցեր ուղղած լինի...»

Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը պատասխանել է «Այունյաց երկրի» հարցերին



– Պարոն Հայրապետյան, ե՛լ ՏԻՄ ընտրությունների շեմին՝ 2016թ. սեպտեմբեր-հոկտեմբերին, ե՛լ 2017թ. Աժ ընտրությունների առիթով բավականին շատ խոստումներ տրվեցին կապանցիներին:

Եթե ՏԻՄ ընտրությունների ժամանակ Դուք էիք ապագա անելիքների ուղղագիծը ներկայացնում, ապա Աժ ընտրությունների ժամանակ՝ պատգամավորի թեկնածուները թիվ 12 ընտրատարածքի վարկանիշային ցուցակից:

Կարո՞ղ ենք հիմա՝ համագիստ մթնոլորտում, ամփոփել՝ ի՞նչ կարելու խոստումներ հնչեցին այդ ժամանակ՝ Կապանին առնչվող եւ որքանով են դրանք իրատեսական ու պահանջված:

– Կոնկրետ ՏԻՄ ընտրությունների ընթացքում տրված խոստումները տեղ են գտել հետագայում ընդունված՝ համայնքի զարգացման հնգամյա ծրագրում, այնպես որ դրանք չեն մնացել զուտ իբրեւ խոստումներ կամ նախընտրական ծրագիր, այլ ամրագրվել են առավել լուրջ փաստաթղթով, մյուսներն էլ մեր ամենօրյա աշխատանքի մասն են կամ ընթացիկ տարվա անելիքներից:

Ինչ վերաբերում է պահանջվածությանը, դրանք ի հայտ են եկել ոչ թե պարզապես մեր ցանկությանը կամ նախընտրությանը, այլ՝ բնակչության հետ տարբեր համոզվածությունների, նաեւ մեր աշխատանքի ընթացքում:

Օրինակ, երբ 4 տարի առաջ ձեռնարկ էր արվում քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխությանը, դա պահանջված էր եւ կարելու, սակայն քաղաքացիները նման ձեռնարկները մամբ չէին բարձրացրել հարցը, երեւի շատերը չէին էլ գիտակցում, թե որն է իրենց խնդիրների աղբյուրը, բայց ամեն մեկի անձնական

հարցադրմանը ծանոթանալով՝ եկանք համոզման, որ դրա անհրաժեշտությունը կա:

Հիմա նույնպես, եթե մարդը գալիս է քաղաքապետարան եւ ասում, որ տանիքը կաթում է, վերելակը չի աշխատում կամ մուտքը նորոգման կարիք ունի, ինքն իր անձնական կամ առավելագույնս իր շենքի խնդիրն է բարձրացնում: Իսկ մեր առաջարկած փոփոխության ձեռնարկում ու տված խոստումը վերաբերում էին խնդրի համակարգային լուծմանը, այն է՝ պիտի այլընտրանք լինի բազմաբնակարան շենքերի կառավարման չարդարացված մոդելին՝ համապատասխան: Բայց փոփոխության ձգտելիս՝ բախվեցինք իրողությանը, որ բնակչահագործման տեղանաս ստեղծել չենք կարող, քանզի օրենքով գործող կառավարման միակ տարբերակը մնում է համապատասխանությունը: Ուստի, նախեւառաջ օրենսդրական փոփոխություն է անհրաժեշտ, դրա համար էլ այս հարցը փորձում ենք հասցնել ավելի վերին օղակներ: Մինչեւ գործող այս կառույցները չլուծարվեն, մեկ այլ կառույց չի կարող նրանց լիազորությունները ստանձնել:

– Կարո՞ղ ենք արձանագրել, որ Ձեր նախընտրական ծրագրի հիմնադրույթները (հիմնականում) տեղ են գտել համայնքի զարգացման հնգամյա ծրագրի մեջ: Եվ, եթե կարելի է, համառոտ ներկայացրեք, խնդրեմ, համայնքի զարգացման հնգամյա ծրագրի կառուցվածքն ու բովանդակությունը:

– Արդեն մասամբ պատասխանեցի, այո՛, համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը կազմելիս՝ առաջնորդվել ենք նաեւ իմ նախընտրական ծրագրի դրույթներով, որովհետեւ, ի վերջո, այդ երկու փաստաթղթերի առանցքում էլ այն Կապանն է, որը ցանկանում են տեսնել:

Եւ, որ այդ ծրագրի կառուց-

էջ 4

Նոյեմբերի 5-ին՝ համայնքների ղեկավարների ընտրություն Կապանում, Սիսիանում եւ Քաջարանում

ՀՀ կառավարությունը 2017թ. մայիսի 18-ի նիստում ընդունել է ՀՀ օրենքի նախագիծ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին»:

Ըստ առաջարկվող նախագծի՝ Կապան համայնքի մեջ կմտնեն Կա-

պան քաղաքը, Ագարակ, Աղվանի, Աճառան, Անտառաշատ, Առաջածոր, Արծվանիկ, Բարգուշատ, Գեղամուշ, Գոմարան, Դավիթբեկ, Դիցմայրի, Եղեգ, Եղվարդ, Խղրանց, Խորձոր, Ծավ, Կաղնուտ, Չորաստան, Գակատեն, Ներքին Խոտանան, Ներքին Հանդ, Նորաշենիկ, Շիկահող, Շիշկերտ, Շրվենանց, Չափնի, Սզնակ, Սյունիք, Սրաշեն, Սեւաքար, Վանք, Վարդավանք, Վերին Խոտանան, Տանձավեր, Տավրուս, Ռեժանիս, Օխտար գյուղերը:

Սիսիան համայնքի մեջ կմտնեն Սիսիան, Դաստակերտ քաղաքները, Ախլաթյան, Աղիտու, Անգեղակոթ, Աշոտավան, Արեւիս, Բալաք, Բնունիս, Բռնակոթ, Գետաթաղ, Դարբաս, Թանահատ, Թասիկ, Իշխանասար, Լժեն, Լոր, Հացավան, Մուցք, Նժդեհ, Նորավան, Շաղատ, Շամբ, Շաքի, Շենաթաղ, Որոտնավանք, Սավարդ, Վաղատին, Տոլրոս, Տորունիք, Ցղունի, Ույծ գյուղերը:

Քաջարան համայնքի մեջ կմտնեն Քաջարան քաղաքը, Անդրկավան, Աջաքաջ, Բարիկավան, Գեղավանք, Գեղի, Գետիշեն, Լեռնածոր, Կաթնառատ, Կավճուտ, Կարդ, Կիցք, Չափկավան, Ներքին Գիրաթաղ, Նոր Աստղաբերդ, Ոչեթի, Վերին Գեղավանք, Վերին Գիրաթաղ, Փուխրուտ, Քաջարանց, Քարուտ գյուղերը:

Կառավարությունն առաջարկել է Սյունիքի մարզի Կապան, Սիսիան, Քաջարան նորակազմ համայնքներում 2017թ. նոյեմբերի 5-ին անցկացնել համայնքների ղեկավարների եւ ավագանիների անդամների ընտրություններ՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:

Ենթադրվում է, որ Ազգային ժողովն առաջիկայում կքննարկի օրենքի այդ նախագիծը:

Սեփ.լրագրություն

2017թ. ամառային զորակոչ անցկացնելու եւ զորացրում կատարելու մասին

Հիմք ընդունելով «Ձինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ եւ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածները՝ որոշում են.

1. 2017 թվականի մայիս-հուլիս ամիսներին անցկացնել Հայաստանի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների պարտադիր զինվորական եւ այլընտրանքային ծառայությունների ամառային զորակոչը, որոնց 18 տարին լրացնում է մինչեւ 2017 թվականի հունիսի 30-ը ներառյալ, ինչպես նաեւ այն քաղաքացիների, որոնց նախկինում տրված՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքը դադարել է մինչեւ 2017 թվականի հունիսի 30-ը ներա-

ռյալ:

2. Ապահովել այլընտրանքային աշխատանքային ծառայության կազմակերպումը եւ իրականացումը:

3. 2017 թվականի հունիս-հուլիս ամիսներին զորացրել սահմանված ժամկետում պարտադիր զինվորական եւ այլընտրանքային ծառայություն անցած զինծառայողներին:

4. Այլընտրանքային աշխատանքային ծառայությունից արձակել սահմանված ժամկետում այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցած ծառայողներին:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ սույն հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո երկշաբաթյա ժամկետում ընդունել սույն հրամանագրի կիրարկումն ապահովող համապատասխան որոշում:

6. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՐ Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2017թ. Մայիսի 15
Երևան
ՆՅ-355-Ն
president.am



Խոշորացված համայնքներում մեկնարկել են ավելի քան 2.5 մլն ԱՄՆ դոլարի Ներդրումային ծրագրերը

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) «Աջակցություն տեղական ինքնակառավարման բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում եւ ՀՀ-ում Շվեյցարական համագործակցության գրասենյակի աջակցությամբ, մի շարք խոշորացված համայնքներում արդեն մեկնարկել է շուրջ 2 մլն 580 հազար ԱՄՆ դոլարի տեխնիկական միջոցների եւ սարքավորումների տրամադրման գործընթացը:

Մասնավորապես, Սյունիքի մարզի Տաթև, Տավուշի մարզի Դիլիջան եւ Լոռու մարզի Թումանյան խոշորացված համայնքներին տրամադրվել են կոմբայներ, ավտոգրեյդերներ, բազմաֆունկցիոնալ էքսկավատորներ, աղբատար մեքենաներ, ինքնաթափ բեռնատարներ եւ այլ տեխնիկական միջոցներ եւ սարքավորումներ:

Առաջիկայում համայնքները կստանան նաեւ այլ տեխնիկական միջոցներ, միկրոավտոբուսներ, բոլոր բնակավայրերում կկառուցվեն կանգառներ: Նախատեսվում է հա-

մայնքներում կառուցել տեխնիկայի սպասարկման կայանատեղիներ:

Ընդհանուր առմամբ, տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրի շրջանակներում 2018 թվականի ընթացքում 18 խոշորացված համայնքները կստանան ավելի քան 11 մլն ԱՄՆ դոլար արժողության (ԱՄՆ-ՄՁԳ՝ 8 մլն 600 հազար դոլար եւ ՀՀ-ում Շվեյցարական համագործակցության գրասենյակ՝ 2 մլն 500 հազար ԱՄՆ դոլար) առաջին անհրաժեշտության մեքենաներն ու տեխնիկական միջոցները:

Մնացած խոշորացված համայնքներում կազմակերպվել են մասնակցային հանդիպումներ եւ քննարկումներ, որոնց արդյունքում գույքագրվել են վերահանված կարիքներն ու խնդիրները:

ՏԿԶ նախարարությունում գործող փորձագիտական խմբի կողմից արդեն հաստատվել են Ուրցածոր, Վայք, Ջառիթափ, Գորիայք, Ջերմուկ, Մեղրի խոշորացված համայնքների՝ ընդհանուր առմամբ 2 մլն, 670 հազար ԱՄՆ դոլարի ծրագրերը: Գորիս, Տեղ, Նոյեմբերյան, Կողբ, Այրում, Ամասիա, Աշոցք, Սարապատ եւ Արփի միավորված համայնքների՝ 5 մլն, 950 հազար ԱՄՆ դոլար արժողության ծրագրային առաջարկները գտնվում են նախնական զննահատման փուլում:

Ներդրումային ծրագրերն իրականացվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից, իսկ ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությունը համարվում է վերը նշված ծրագրերի իրականացման համակարգողը:

mtad.am
16.05.2017

Կադրային խեղկապակություններ Սյունիքի բուժական հասարակություններում

Այս օրերին Սյունիքի վերջերս Այունյաց երկրի առողջապահական հիմնարկներում տեղի են ունենում ղեկավար կադրերի պերմանենտ փոփոխություններ՝ հանրությանը անհայտ պատճառներով. առայժմ կադրային ամեն մի փոփոխությունից հետո ասեկոսներին տարափ է միայն...

Մենք հակված չենք, իհարկե, վիճարկելու այդ փոփոխությունների նպատակահարմարությունը (այդպիսի իրավունք է չունենք), դա հիմնարկի՝ Սյունիքի մարզպետարանի գործն է, բայց բախվել ենք մի իրողության, որ մտահոգում է այստեղ բնակվողների, որից կանայականության եւ ցինիզմի մզլահոտ է փչում:

Տեսե՛ք՝ ինչ է կատարվում: Կապանի բժշկական կենտրոնի տնօրեն Սմբատ Օրբելյանին, ով Արցախյան պատերազմի օրերից մինչեւ հիմա հազարավոր մարդկանց կյանք է փրկել իր գործընկերների հետ, ազատում ենք աշխատանքից եւ ամբողջ հանրապետությունով մեկ աղմուկ բարձրացնում՝ ապացուցելու այդ քայլի անհրաժեշտությունն ու ճշմարտացիությունը: Փոխարենը պաշտոնակատար ենք նշանակում եւ փառաբանություններով կոլեկտիվին ներկայացնում Ռոմա Սարգսյանին, ով Կապանի բժշկական քոլեջի երկարամյա տնօրենն էր: Երեք-չորս ամիս անց, առանց որեւէ պատճառաբանության, նրան ազատում ենք զբաղեցրած պաշտոնից եւ մեկ ուրիշին նշանակում պաշտոնակատար՝ դարձյալ ծփացող փառաբանություններով ու զովեստ-

նոքի ելնող բժիշկներին...

Տնօրենի փոփոխություն է կատարվում նաեւ Սիսիանի հիվանդանոցում. գիտությունների թեկնածու, ճանաչված ու հարգված բժշկուհի Սվետլանա Իսախանյանը ստիպված է լինում դիմում գրել եւ հեռանալ, ու փոխարինում է Դարբաս գյուղի բժշկուհին:

Ավելի վաղ աշխատանքից ազատվում է Քաջարանի բուժհաստատության տնօրենը, ում փոխարինում է Երեւանից բերված մի բժիշկ, ով էլ երեկվանից (ինչպես հայտարարվել է) կզխավորի Քաջարանի ու Կապանի միացյալ հիվանդանոցը:

Մեղրու բժշկական կենտրոնի շուրջ էլ չի մարում աղմուկը, որն ուղեկցվում է մամուլի հակասական եւ իրարամերժ հրապարակումներով:

Կրկնում ենք՝ մարզպետարանի գործն է տարածաշրջանային բժշկական կենտրոնների ղեկավարների նշանակումն ու ազատումը, բայց մի քանի ամսում այսքան փոփոխություն՝ առանց հիմնավորման, առանց պատճառաբանության, չի տեղավորվում նորմալ տրամաբանության եւ հանրապետության նախագահի՝ օրերս հռչակած քաղաքականության փիլիսոփայության մեջ:

Եթե Կապանում տնօրենի պաշտոնակատար է ամիսներ առաջ նշանակվել Ռոմա Սարգսյանը, ապա ինչո՞ւ է նա հանկարծակի ազատվում. մի՞թե սխալ նշանակում է եղել (եթե սխալ նշանակում է եղել, ապա ո՞վ է պատասխանատու), մի՞թե մարզպետը կամայականություն է դրսեւորել ի սկզբանե եւ հիմա էլ շարունակում

վությունը վիրավորում են, իսկ Դուք լռում եք: Ստեղծված բարոյահոգեբանական մերժելի վիճակը, լարվածությունը, անվստահությունը հարթահարելու համար որքա՞ն տարիներ ու ջանքեր են պահանջվելու:

Գոնե հիմա կարո՞ղ եք Սյունիքի հանրությանը բացատրություն տալ, թե վերջին վեց-յոթ ամսում ինչու են տարածաշրջանային բժշկական կենտրոնների տնօրենները (տնօրենների պաշտոնակատարները) հերթականությամբ ու հաջորդությամբ ազատվել աշխատանքից: Եվ ինչո՞ւ, ի՞նչ հանգամանքների մղումով են Երեւանից ղեկավար կադրեր նշանակվել՝ առայժմ առանց մրցույթի:

Ցավոք, հիմա Սյունիքում կադրային այնպիսի քաղաքականություն է վարվում, որ թափուր պաշտոնների (աշխատատեղերի) համար՝ հավաքարար-պահակից մինչեւ մարզպետ, Երեւանից են բերում: Այդ գործելակերպն առավել ցցուն երեւում է առողջապահության ոլորտում (որքան ողջունելի կլինե՞ր, եթե նույն եռանդով ու հետեւողականությամբ նեղ մասնագետներ, փորձառու բժիշկներ գործուղե՞ք մարզ):

Մայրաքաղաքի գրեթե բոլոր կլինիկաներում այունյացի բազում ճանաչված բժիշկներ կան, փորձառու շատ մասնագետներ կան տեղում՝ Սյունիքում, իսկ առողջապահության գործի կազմակերպիչներ՝ միայն Սյունիքում՝ որքան ուզե՞ք:

Եվ, այդուհանդերձ, Սյունիքի բժշկական հաստատությունների տնօրենների պաշտոնում է Կապանում, եւ Գորիսում նշանակվել են մայրաքաղաքի բժիշկներ... Սիգուցե եւ նրանք արժանավոր են ու անփոփարիներ, չենք կարող ասել: Բայց տրամաբանությունը՝ տնօրեններ բերել միայն Երեւանից, կասկածելի է: Հանրությանն էլ, որպես կանոն, չեն ներկայացվում նորանշանակները, չեն ներկայացնում նշանակման մոտիվները: Ի դեպ, հանկարծ չմտածե՞ք, որ Սյունիքում տեղային մտածելակերպի ջատագով ենք եւ տեղային զգացմունքներ ենք արթնացնում. միայն վերջին ամիսներին Սյունիքում իրականացվող կադրային քաղաքականությունից ենք հասկացել, որ այունյացի եւ մայրաքաղաքցու միջեւ, ավա՞ղ, խիստ տարբերություն կա:

Այդ ամենը չի վկայում սոսկ այն մասին, որ մարզում ներդրվում է Սյունիքն առանց այունյացիների կառավարելու անբարո եւ ոչ ազգային մոդելը: Այդ ամենը վկայում է նաեւ այն մասին, որ Սյունիքի հանդեպ կամայականությունը, քանահարանը նոր աստիճանի են բարձրացվում: Գոնե առողջապահության համակարգը հեռու պահենք փորձարարությունից եւ կամայականությունից:

Դուք Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարն եք, պատասխանատու եք նաեւ Սյունիքում իրականացվող առողջապահական պետական քաղաքականության համար:

Ուզում ենք, որ Դուք պատասխանեք բարձրացված հարցերին:

Համոզված ենք, որ ծանոթ եք «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին, որի համաձայն էլ խնդրում ենք պատասխանել մեզ մտահոգող հարցերին:

**Հարգանքով՝
Սամվել Ալեքսանյան
24 մայիսի 2017թ.
www.syunaicyer.kir.am**

Եվրոպայի օրը՝ Կապանում եւ Գորիսում



Եւ այլն: Եւ այլն:

Կապանի քաղաքապետը կարելու էր Գոյաստանի տնտեսության տարբեր ոլորտների զարգացմանն ուղղված Եվրամիության աջակցությունը, ինչպես նաեւ համայնքային մակարդակով ԵՄ-ի հետ համագործակցությունը՝ անդրադառնալով Կապանում Եվրամիության աջակցությամբ արդեն իսկ մեկնարկած պլաստիկ թափոններից շինանյութերի արտադրության ծրագրին, որ ներառում է ոչ միայն Սյունիքի, այլեւ Վայոց ձորի մարզը: Նա նշեց, որ քաղաքապետարանը պատրաստվում է նաեւ հայտարարված դրամաշնորհային այլ ծրագրերի մասնակցելու հայտ ներկայացնել:

Եվրոպայի օրվա այս տարվա նախաձեռնություններից մեկն էլ Հայաստանի տարբեր անլուծունեի երաժշտական դպրոցի սաների ու դասատուների մասնակցությամբ Եվրոպայի օրիներգի կատարումն էր, որը Կապանում ստանձնել էին քաղաքի N1 եւ N3 երաժշտական դպրոցների սաներն ու դասատուները:

Միջոցառման մասնակիցները շրջեցին նաեւ տարբեր տաղավարներով, որոնցում ներկայացվել էին այն ծրագրերը, որոնք ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում եւ մասնավորապես Սյունիքի մարզում: Հրապարակում փոքրիկների հետաքրքիր ժամանցի համար նույնպես ստեղծվել էին անհրաժեշտ պայմաններ: Իսկ երեկոյան տոնի առթիվ կազմակերպված բացօթյա համերգին ելույթ ունեցան Հայկ Պետրոսյանը եւ բենդը, Մաշա Մնջոյանը:

Գորիսում մայիսի 20-ին անցկացված տոնական միջոցառման ընթացքում Հայաստանում Եվրամիության դեսպան Պյոտր Սվիտալսկին կարելու էր համայնքի հետ համագործակցությունը, դրա շարունակականությունը, իրականացվող տարբեր ծրագրերում հատկապես երիտասարդների մասնակցությունը:

Գորիսի համայնքապետ Վաչագան Արունցն իր հերթին նույնպես կարելու էր ԵՄ-Հայաստան համագործակցությունը եւ համոզմունք հայտնեց, որ այն հետագայում ավել-

լի է զարգանալու:

Ինչպես տեղեկանում ենք «Եվրամիությունը Հայաստանում» ֆեյսբուքյան էջից, ԵՄ դեսպան Պյոտր Սվիտալսկու եւ Գորիս համայնքի ղեկավար Վաչագան Արունցի մասնակցությամբ այդ օրը մեկնարկեց Եվրոպական թանգարանային գիշերը Գորիսում: Հայաստանում ԵՄ պատվիրակությունն Ալսեյ Բակունցի տուն-թանգարանում բացեց ցուցահանդեսը՝ «Եվրոպան հանուն խաղաղության» ծրագրի շրջանակում ստեղծված գեղանկարներով: Հայաստանի գեղարվեստի բոլոր դպրոցների սաներին առաջարկվել էլ ստեղծել թեմատիկ գեղանկարներ՝ պատկերելով ԵՄ մայրաքաղաքները, բնապատկերներ կամ այն, ինչ, ըստ իրենց, ասոցացվում է Եվրոպայի եւ խաղաղության հետ: ԵՄ պատվիրակության աշխատակիցներից, Հայաստանի ազգային ֆիլիալոնիկ նվագախմբի ներկայացուցիչներից եւ Հայաստանի արվեստի ոլորտի փորձագետներից բաղկացած ոչ պաշտոնական ժյուրին ընտրել է Հայաստանի գեղարվեստի 98 դպրոցի, այդ թվում նաեւ Գորիսի դպրոցների ներկայացրած գեղանկարներից լավագույնները: Այս գեղանկարներն առաջին անգամ ցուցադրվել են մայիսի 6-ին՝ Եվրոպայի օրվան նվիրված դասական համերգի ընթացքում, որը Հայաստանում Եվրոպայի օրվա տոնակատարությունների պաշտոնական բացումն էր:

Գորիսի Գրիգոր Տաթևացու անվան իրապարակում նույնպես օրվա առթիվ երաժշտական դպրոցների սաների մասնակցությամբ ինչեց Եվրոպայի օրիներգը, տեղեկատվական ցուցահանդեսի միջոցով ծանոթացան ԵՄ-ի՝ ՀՀ-ում իրականացվող ծրագրերին, իսկ համերգի ընթացքում բարձր տրամադրություն ապահովեցին Հայկ Պետրոսյանն ու բենդը, Մաշա Մնջոյանը:

Եվրոպայի օրվա տոնակատարությունը կամփոփվի մայիսի 27-ին երեւանում բացօթյա համերգով, որին կմասնակցեն երաժիշտներ ինչպես Հայաստանից, այնպես էլ Լեհաստանից (երեկոյի գլխավոր հյուրերն են լեհ հայտնի երգիչներ Ադրիանցան եւ Տեսկոն):

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ներով:

Գորիսում Սաշա Խաչատրյանին ազատում ենք եւ փոխարենը Գորիսի բժշկական կենտրոնի տնօրենի պաշտոնակատար նշանակում լավ վիրաբույժի եւ կազմակերպչի համբավ ունեցող Գագիկ Թունյանին: Երեք-չորս ամիս հետո նրան ազատում ենք զբաղեցրած պաշտոնից՝ փոխարենը պաշտոնակատար նշանակում Գորիսում հարգված բժիշկ եւ կազմակերպիչ Լեւոն Հարությունյանին: Մի քանի օր հետո նրան նույնպես ազատում ենք՝ փոխարենը նշանակում Երեւանից բերված մի անձնավորության, ում ոչ ոք դեռեւս չի ճանաչում Սյունիքում:

Գորիսի բժիշկները փորձում են ապաստանել, բայց նորանշանակ տնօրենին ներկայացնելու համար այնտեղ ժամանած մարզպետը հիշեցնում է հնարավոր հետեւանքների մասին՝ սպառնալով աշխատանքից ազատել սեփական արժանապատվության պաշտպանության համար

է քնահաճ վերաբերմունքը Կապանի հանդեպ:

Եթե Գագիկ Թունյանին խնդրում ենք ազատվել Երեւանի հիվանդանոցներից մեկում զբաղեցրած բաժնի վարիչի պաշտոնից եւ զալ հայրենի Գորիս ու ստանձնել բժշկական կենտրոնի տնօրենի պարտականությունները, ապա ինչո՞ւ ամիսներ անց նրան ազատում ենք՝ չներկայացնելով գոնե մեկ հիմնավորում:

Եթե Լեւոն Հարությունյանին նշանակում ենք Գորիսի բժշկական կենտրոնի տնօրենի պաշտոնակատար, ապա ինչո՞ւ օրեր անց փոշմանում ենք եւ պաշտոնանկ անում:

Փաստորեն գործ ունենք Սյունիքի առողջապահական համակարգը տրորելու, տեղական կադրերին ծաղրելու անհայտ երեւույթների հետ, որի հանդեպ, ցավոք, Դուք, որպես նախարար, անհասկանալի եւ անբացատրելի լռություն եք ցուցաբերում: Ձեր մասնագետներին ծաղրում են, նրանց արժանապատ-

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ. «Չեմ հիշում, թե երբեք Ձեր թերթն ինձ նման հարցեր ուղղած լինի...»

Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը պատասխանել է «Այունյաց երկիր» հարցերին

Էջ 2
Վածքն ու բովանդակությունը համայնքն ինքը չի մշակում, այլ կան 33 կառավարության կողմից հստակ մշակված կառուցվածք ու բովանդակային կետեր, որոնք պարտադիր են բոլոր համայնքների համար: Ընդ որում, 2017-ի ծրագիրը կազմվեց լրիվ նոր մեթոդաբանությամբ, որն առավել խիստ է իրատեսական եւ կոնկրետություն պահանջող: Այն զուտ ցանկությունների փաստաթուղթ չէ, այլ՝ հիմնավորված:

Կառուցվածքի մասին հարցազրույցում հնարավոր չէ մանրամասն կատարել, սակայն, որ ծրագրում ընդգրկված են համայնքում առկա իրավիճակը՝ ըստ տարբեր ոլորտների, նախատեսվող ծրագրերը, որոնց ֆինանսավորումն ակնկալվում է պետությունից, համայնքային բյուջեից, տեղական եւ միջազգային դոնորներից, ընդ որում, յուրաքանչյուր ծրագիր հիմնավորվում է համայնքի համար դրա անհրաժեշտությամբ, ակնկալվող արդյունքներով:

Կա նաեւ կանխատեսվածների բաժին, որտեղ ֆինանսական եւ համայնքային կյանքին վերաբերող վերլուծություններ են, անդրադարձ կա զարգացման խոչընդոտների եւ դժվարություններին, համայնքի ուժեղ եւ թույլ կողմերին, հակիրճ ձեւակերպված է համայնքի զարգացման տեսլականը եւ այլն:

– Ենթադրում ենք, որ զարգացման հնգամյա ծրագրի յուրաքանչյուր կետ ֆինանսական ստույգ հիմնավորում ունի. արդյո՞ք այդպես է:

– Ծրագրում կան եւ հստակ գործողություններ, որոնք պարտադիր են եւ ունեն կոնկրետ ժամկետներ ու ֆինանսավորման աղբյուրներ, եւ ցանկալի գործողություններ, որոնք համայնքը կարելի է, բայց ֆինանսավորման աղբյուրը դեռեւս գտնված չէ:

Եվ նոր մեթոդաբանությամբ պետք է կատարվի նաեւ մոնիտորինգ, այսինքն՝ ծրագիրը հենց այնպես չես գրում ու թղթին թողնում, ամեն կետի համար համայնքը պատասխանատվություն է կրում:

– Աժ ընտրությունների մասիտրեին կապակցված խոստացան, հավաստիացրին վերագործարկել մարզկենտրոնի օդակայանը, եւ մարդիկ սպասում են անհամբեր...
Ի՞նչ ընթացքի մեջ է այդ խոստման կատարումը, ե՞րբ կարող է իրականություն դառնալ ծրագիրը եւ ի՞նչ միջոցներով: Հետաքրքիր է՝ ի՞նչ արժե այդ հաճույքը:

– Տրված խոստման ուղղությամբ տարբեր աշխատանքներ են ընթանում, որին զուգահեռ քննարկվում են օդանավակայանի վերագործարկման տարբեր մանրամասներ, մի քանի անգամ իրավիճակը մասնագետների խումբը տեղում աշխատել է:

Հստակեցվում է նաեւ օդանավակայանի համար անհրաժեշտ մակերեսը, որովհետեւ այնտեղ գույքը համայնքային սեփականություն է,

դրա տակ եղած հողի մի մասը՝ Կապանի, մյուս մասը Սյունիք համայնքի վարչական սահմաններում է:

Նախնական շինարարական աշխատանքներ են ընթանում, քաղաքապետարանի կողմից արդեն տրվել են նախկինում կառուցված շինությունների քանդման թույլտվությունները:

Ներկայումս նաեւ բանակցություններ են ընթանում «Բաշկիրիայի ավիաուղիների» հետ՝ օդանավակայանի պայմաններին եւ ենթադրվող ուղեւորների քանակին համապատասխան ինքնաթիռներ ձեռք բերելու համար: Քաղաքապետարանի մասնագետներն ուսումնասիրում են նրանց ֆունկցիան առկա՝ առաջարկված ինքնաթիռները:

Սյուն մանրամասները, կարծում են, կարող է հայտնել վերագործարկման ծրագրի նախաձեռնողն ու իրականացնողը՝ Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրման հիմնադրամը:

– Աժ ընտրությունների ժամանակ Կապանում շրջանառվում էր մի հարց, որ պատասխան չտրվեց: Հարցն այսպիսին էր՝ Աշոտ Հայրապետյանն այն անձնավորությունն է, ով, դատելով 2012 եւ 2016թթ. ՏԻՄ ընտրությունների արդյունքներից, ամենամեծ ընտրազանգվածն ունի Կապան քաղաքում: Եվ նման ընտրազանգված ունեցող անձնավորությունը չառաջադրվեց պատգամավորի թեկնածու: Ոմանք դա զնահատեցին 334-ի բաց թողնված շանը Կապանում: Եվ, այդ բոլորով հանդերձ, ինչո՞ւ կուսակցությունը Չեզ չառաջադրեց պատգամավոր թեկնածու, իսկ միզուցե Գուբ հրաժարվեցի՞ք ընդգրկվել թիվ 12 ընտրատարածքի տարածքային ընտրական ցուցակում:

– Նախ քան, որ ՏԻՄ եւ համապետական ընտրությունները տարբերվում են. ՏԻՄ ընտրությունները, քաղաքական լինելով հանդերձ, քիչ քաղաքականացված են, Աժ ընտրությունները լրիվ քաղաքականացված են, թեւ փոքր համայնքներում, այնուամենայնիվ, մարդիկ առաջնորդվում են ոչ թե գաղափարներով, այլ անձերով:

Ընտրությունների ընթացքում դու միայն ինքը քեզ կամ քո թիմի քարոզչությունը ներկայացնելու խնդիր չես լուծում. յուրաքանչյուր քաղաքական ուժ ակնկալում է ձեռքբերումներ, եւ թիմում ընդգրկված ամեն անդամ փորձում է ոչ միայն ունեցած հավանական ընտրազանգվածն իր հետեւից տանել, այլ նաեւ ձեռք բերել այն ընտրողների քվեն, որոնց կողմնորոշումը նախապես տեսանելի չէ: Ուստի, եթե դա կարող ես անել նաեւ առանց ասպարեզ դուրս գալու, ամրագրում ես այն, ինչը անձնապես քոնք չի կոչվում, բայց քո թիմին է:

Եթե ես արդեն իսկ գիտեմ՝ ովքեր են իմ կողմնակիցները, ովքեր ընտրություններին ակտիվ են լինելու, սատարելու են իմ թիմին իմ կոչով, հորդորով, խնդրանքով, պարտադիր չեն համարում, որ թեկնածուներից

մեկը լինեմ: Այդ մարդիկ իմ կողքին էին՝ անկախ իմ թեկնածու լինել-չլինելու հանգամանքից, եւ եթե ինքս հանդես եմ եկել կոչով, նրանք գիտեին իմ կողմնորոշումը, դրանով իսկ ես իմ դերակատարությունն ունեցա:

Մարդիկ, ովքեր ինձ վստահել էին ամիսներ առաջ, էլի վստահեցին՝ արդեն համընդհանուր՝ իմ թիմի շահի համար, եւ թե՛ իմ, թե՛ համախոհների կատարած աշխատանքների արդյունքներից գոհ եմ:

– Վերջին ընտրություններին առնչվող հարցերը միզուցե եւ հրատապ չլինեին այսօր, եթե ապրիլի 2-ի արդյունքները մարզկենտրոնում, մեղմ ասած, մտահոգիչ չլինեին 334-ի համար:

Ապրիլի 2-ի քվեարկությանը մասնակցած կապանցիների մոտ 40 տոկոսն է քվեարկել 334-ի օգտին: Առաջին հայացքից դա վատ ցուցանիշ չէ, բայց եթե համեմատում ենք նախորդ տարիների ընտրությունների արդյունքների հետ, ապա ակնհայտ է դառնում, որ 334-ն Կապանում իր դիրքերը բավականին զիջել է: Ինչո՞վ եք պայմանավորում այդ անհանջը:

– Նախ ասեմ, որ «Այունյաց երկիր» թերթի հրապարակման մեջ, որը վերաբերում էր Կապանում 334-ի՝ իբր արձանագրած նահանջին, բերված թվերն աղավաղված են, եւ համեմատությունները՝ ոչ տեղին: Վերլուծականում սխալներ կան, եւ անկեղծ ասած, ակնկալում էի, որ արձագանքողներ կլինեն, սակայն, ցավոք, չեղան:

Ամեն դեպքում ընտրողների տված քվեների տոկոսը հաշվարկվում է վավեր քվեաթերթիկների թվից, իսկ թերթի հոդվածում մի դեպքում վերցված է ընդհանուր ընտրողների թիվը, մի դեպքում՝ վավեր քվեաթերթիկների, ինչն էլ համեմատության իրական հիմք չի ապահովում: Այդ ամենով հանդերձ, իրական չեն նաեւ նշված թվերն ու Կապանում 334-ի հավաքած ձայների տոկոսները:

Ինձ մոտ առկա են թերթում նշված տարբերվող ընտրությունների արդյունքները, եւ ինքս նորից կներկայացնեմ 334-ի գրանցած տոկոսները:

Եվ մեկ կարելու դիտարկում. համեմատություններն արվում են նույն ձեւաչափով, նույն հարթության մեջ գտնվող երեւոյթների միջեւ. այս դեպքում չի կարելի Աժ ներկա համամասնական ընտրակարգի ցուցանիշները համեմատել նախկին մեծամասնական ընտրության 334 թեկնածուի հավաքած ձայների տոկոսների հետ... Ընդ որում, եղել է մեծամասնական ընտրություն, երբ թեկնածուն անգամ մրցակից չի ունեցել, իսկ 2017-ին պայքարում էր 9 կուսակցություն եւ դաշինք, նրանցում ծնունդով կապանցի թեկնածուներն էլ 20-ից ավելին էին, եւ կապանցիների ձայները պետք է

բաշխվեին այդ բոլոր ուժերի միջեւ... Այդ ամենով հանդերձ, 334-ն ոչ թե նահանջել է, այլ ավելի քիչ մասնակցություն, նման մեծ մրցակցության պարագաներում, տոկոսային աճ եւ առաջընթաց արձանագրել:

Նախ՝ 2017-ին Կապանում ոչ թե 19507, այլ 19580 ընտրող է եկել քվեարկության, անվավեր է եղել 127 քվեաթերթիկ: 334-ի օգտին ոչ թե 7839, այլ 8852 մարդ է քվեարկել, այսինքն՝ ձեր նշած 40.2 տոկոսի փոխարեն՝ Կապանում 334-ն ստացել է 46 տոկոս ձայն, կրկնում եմ՝ տոկոսը հաշվարկվել է վավեր քվեաթերթիկների թվից:

2007թ. Աժ ընտրություններում համամասնական ընտրակարգով Կապան քաղաքը 334-ին 20938 ընտրողների 19247 վավեր քվեաթերթիկներից տվեց 8143 ձայն՝ 42.3 տոկոս:

2012թ. Աժ ընտրություններում համամասնական ընտրակարգով Կապան քաղաքը 334-ին 20938 ընտրողից տվեց վավեր 20089 քվեներից 8680 կամ 43.2 տոկոս ձայն:

Մեծամասնական ընտրության քվեի հետ թերթի համեմատությանը չեն անդրադառնում, անիմաստ է, ինչպես վերելում նշեցի, լրիվ տարբեր ընտրակարգեր են, նույնկերպ անիմաստ են համարում ՏԻՄ ընտրությունների հետ համեմատելը, երբ մարդիկ ձայն են տալիս ոչ թե քաղաքական ուժի, այլ անհատի, չնայած այդտեղ էլ Ձեր նշած տոկոսները ստույգ չեն:

Ունեմ նույն Աժ համամասնական ընտրությունների տոկոսները հաշվարկված՝ նաեւ առանց գինվորների թվի, նույնիսկ այդ դեպքում էլ տոկոսային առաջընթացն ակնհայտ է... Մեկնաբանությունները թողնում եմ Ձեզ եւ ընթերցողներին:

– Ապրիլի 2-ի նախօրեին Կապան ժամանեց Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը: Նախագահը, ըստ շրջանառվող խոսակցությունների, մարզի ոչ բոլոր քաղաքապետների հետ է առանձնազրույց ունեցել: Բայց Ձեզ հետ, որքանով տեղյակ ենք, համեմատաբար երկար զրույց է ունեցել: Կարող եք չասել, թե ինչ հարցերի շուրջ է եղել զրույցը: Բայց մի բան, անտարակույս, հետաքրքրում է կապանցիներին՝ ի՞նչ հարցեր արժանանցեցին Կապանին առնչված, բանգի միջոց չէ, որ երկրի ղեկավարն առանձնազրույց է ունենում հանրապետության որեւէ համայնքի ղեկավարի հետ:

– Չեմ կարծում, թե որեւէ մեկը ժամանակաչափով հաշվել է, թե ով որքան է գրուցել 33 նախագահի հետ... Բայց չեմ կարող չասել, թե որն էր զրույցի թեման, որովհետեւ ես որպես համայնքի ղեկավար եմ հանդիպում ունեցել նախագահ Սերժ Սարգսյանի հետ, այլ ոչ որպես մասնավոր անձ, հետեւաբար՝ խոսակցության առանցքը եղել են Աժ ընտրությունները եւ հարցեր, որոնք վերաբերում են Կապան համայնքի հիմնախնդիրներին:

– Ըստ էության, որոշակիացվել է Սյունիքի մարզի համայնքների խոչընդոտման հետագա ծրագիրը: Շրջանառվող ծրագրի համաձայն՝ կխոչընդոտվի նաեւ Կապան համայնքը: Բացի Քաջարան քաղաքից եւ մերձակա Քաջարան, Լեռնաձոր, Գեղի, Նոր Աստղաբերդ գյուղերից, տարածաշրջանի մյուս բնակավայրերը կմիավորվեն Կապան քաղաքի հետ:

Ինչպե՞ս եք վերաբերվում համայնքների խոչընդոտման ծրագրին:

Հիշեցնենք, ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ Սյունիքի մարզում ոչ միանշանակ կարծիք կա համայնքների խոչընդոտման առումով:

– Առհասարակ, խոչընդոտման

ծրագրին դրականորեն եմ վերաբերվում, բայց դա, ըստ իս, պետք է լինի ոչ թե ինքնանպատակ, այլ խոչընդոտման արդյունքում մեկ համայնքում միավորված բնակավայրերը, դրանց բնակիչները պիտի առավել շահեկան վիճակում հայտնվեն:

Տեղական ինքնակառավարում ասելով՝ ես առաջին հերթին հասկանում եմ սուբյեկտի՝ համայնքի եւ քաղաքացու իրավունքների իրացումը: Նշանակում է՝ խոչընդոտված համայնքն իր իրավունքներն առավել արդյունավետորեն իրացնելու հնարավորություն պետք է ունենա:

Խոչընդոտումը չի նշանակում ընդամենը աշխարհագրորեն վարչական սահմանները փոփոխել ու սահմանել, որ այսուհետ սա է համայնքը: Դա ենթադրում է քաղաքացու, տնտեսվարողի, խոչընդոտված համայնքի լիազորությունների եւ իրավասությունների ընդլայնում, հետեւաբար՝ նախեառաջ՝ օրենսդրական փոփոխություններ:

Հնարավոր տարբերակ կարող էր լինել նաեւ խոչընդոտմանը զուգահեռ միջամայնքային միությունների ստեղծումը, որովհետեւ խոսքը նաեւ ծառայությունների կենտրոնացման մասին է, իսկ կան համայնքներ, որ մինչ խոչընդոտումը չեն էլ կարողացել օգտվել այդ ծառայություններից: Դա ենթադրում է նոր համայնքի համար նոր ռեսուրսների, նոր հնարավորությունների անհրաժեշտություն:

Ինչ վերաբերում է Կապանին, ապա այս տարիներին, երբ հարցը սրությամբ քննարկվում էր այլ համայնքներում, ես չեմ հիշում, որ որեւէ համայնքի ղեկավար կամ բնակիչ վատ ընդունեց այս լուրը: Չմոռանա՞ք՝ Կապանը ստեղծվել է շրջակա գյուղերի բնակչության ներքին միգրացիայի հաշվին՝ պայմանավորված Կապանում առկա աշխատատեղերով: Իսկ յուրաքանչյուր կապանցի էլ արմատներով նախկին Կապանի շրջանի որեւէ գյուղից է: Եվ մեզ մոտ միմյանց ըստ գյուղերի գատելու սովորությունները կարող են շրջակա չկա: Այսօր էլ Կապանում այդ 32 գյուղից առանց հաշվառման բնակվում են հազարավոր մարդիկ, ովքեր ընտրությունից ընտրություն են հայրենի գյուղ գնում: Եվ այդ գյուղերի որեւէ բնակիչ եթե դրսում հարցնում եմ՝ որտեղացի՞ եմ, ասում է՝ կապանցի եմ, չի նշում գյուղը: Այնպես որ, միանալ-չմիանալու խնդիրն այստեղ տուր չի որված, շրջանի ամեն գյուղացի էլ իրեն համարում է կապանցի ու Կապանը՝ իր քաղաքը եւ ունի դրա լրիվ իրավունքը: Այլ հարց է, թե խոչընդոտման արդյունքում գյուղն ինչ է շահելու:

– Արդեն իսկ կարելի է ասել, որ 2017-ը ՏԻՄ ընտրությունների տարի կլինի եւ Կապանում, եւ Սիսիանում:

Միզուցե եւ վաղ է հարցնել, բայց շատերին է հետաքրքրում՝ Աշոտ Հայրապետյանը կառաջադրվի՞ խոչընդոտվող համայնքի ղեկավարի թեկնածու, թե՞ ոչ:

Դուք տարօրինակ մի համարեք, երբ որոշ վկայակոչումներ անելիս հղում ենք կատարում հանրության մեջ շրջանառվող կարծիքին կամ խոսակցությանը. դա բխում է պաշտոնական տեղեկատվության բացակայությունից: Այդպիսի մի խոսակցության համաձայն էլ՝ 33 նախագահի հետ Ձեր առանձնազրույցի ժամանակ Սերժ Սարգսյանը գոհություն է հայտնել Կապանի քաղաքապետի գործունեության վերաբերյալ: Եվ իբր հենց այդ հանդիպման ժամանակ բարձր երաշխավորություն եք ստացել՝ 334-ի կողմից առաջադրվելու բազմաբնակավայր Կապան համայնքի ղեկավարի թեկնածու: Հավաստի՞ եմ արդյոք այդ խոսակցությունները:

– Ես ներկայացնում եմ կոնկրետ քաղաքական թիմ, եւ առաջին

անզան չէ, որ ընտրությունից առաջ նման հարցին նման պատասխան են տալիս. ընտրությունը քաղաքական գործընթաց է զարգացում է, ուստի ժամանակից առաջ չընկնենք, այդ մասին կխոսենք համապատասխան ժամանակահատվածում:

– Դուք Ձեր տեղում շատ վատահ եւ ինքնուրույն գործչի տպավորություն եք թողնում, եւ դա գնահատելի է:

Բայց Կապանում տեղի են ունենում իրադարձություններ, որոնց վերաբերյալ Ձեր պաշտոնական դիրքորոշումը, որքան էլ սպասված է, չի երեւում...

Օրինակ, Կապանի հիվանդանոցի եւ Պոլիտեխնիկի մասնաձյուղի ղեկավարի անսպասելի փոփոխությունը, որ մինչեւ այսօր էլ ըստ պատշաճի չի հիմնավորվել ու հանրությանը չի ներկայացվել:

Իհարկե, դրանք Ձեր ղեկավարման տիրույթից դուրս հարցեր են, բայց ինչպե՞ս կարող է մարզկենտրոնի ընտրյալ ղեկավարն անտարբեր հայեցողի դերում գտնվել այնպիսի կարեւոր հարցերում, ինչպիսիք հիվանդանոցի ղեկավարի եւ միակ պետական բուհի ղեկավարի փոփոխությունն է:

– Ձեմ հիշում, թե երբեւէ Ձեր թերթը ինձ նման հարցեր ուղղած լինի, երբ փոխվում են Կապանի հարկային տեսչության պետը, մարզի դատախազը, ոստիկանության բաժնի կամ վարչության պետը եւ շատ այլ կառույցների ղեկավարներ, որոնք նույնպես շատ կարեւոր դերակատարում ունեն մեր համայնքի եւ նրա բնակիչների կյանքի համար:

Ինքս, իհարկե, իմ սուբյեկտիվ կարծիքն ունենալով հանդերձ, ինձ թույլ չեմ տա գնահատականներ տալ, որովհետեւ միեւնոյն է՝ դա ինչեւէլ է զուտ իբրեւ սուբյեկտիվ կարծիք, թեւէ մշեմ, որ Ձեր թվարկած կառույցների ղեկավարների փոփոխությանը զուգահեռ զարգացումները հանրությանը ներկայացվել, պատճառաբանվել, մեկնաբանվել են իրավասու մարմինների կողմից:

– Մի քանի ամիս է, ինչ հանրապետության իշխանական համակարգից՝ ամենատարբեր մակարդակով, ներդրումային ծրագրեր են մեզ խոստանում, նույնիսկ թվեր են մատնանշում՝ ներդրվելիք գումարները արտացոլել: Տարվա հինգերորդ ամսում ենք արդեն, հետաքրքիր է՝ այդ ընթացքում ովքեր եւ ինչ ներդրումներ են կատարել մարզի ամենախոշոր բնակավայրում՝ Կապանում:

– Մասնավոր ընկերությունների կողմից համայնքում ներդրումների չափը հասանելի է մեզ այնքան, որքան որ հանրությանը, ՁԼՄ-ներին, երբ որ դրանք իրենց ցանկությամբ հրապարակվում են կամ հաշվետուություններ են ներկայացնում: Մենք այդ գործընթացներին մասնակցում ենք այն սահմանագծում, որում որ դրանք առնչվում են համայնքային կյանքին, քաղաքի հիմնախնդիրների լուծման ուղղությամբ մեր համագործակցությանը:

Ինչ վերաբերում է կոնկրետ մեր կողմից կամ անմիջապես մեզ հետ տարվող աշխատանքներին, մեր գործունեությունը բաց է, ժամանակ առ ժամանակ հանդես ենք գալիս հաշվետվություններով, իսկ համայնքում իրականացվող ամեն մեծ ու փոքր աշխատանքի մասին տեղեկատվություն է տրվում: Մեզ առնչվող ամենախոշոր ներդրումներից են կառանձնացնելի «Բնագաղափարական մարտահրավերները հնարավորությունների վերածելով՝ պլաստիկ արբից շինանյութերի ներմուծում» ծրագիրը, որն իրականացնում է համայնքապետարանը՝ տեղական այլ 34-ների հետ՝ եվրամիության եւ 33 կառավարության ֆինանսա-

կան աջակցությամբ, ինչպես նաեւ՝ մեր ֆինանսական ներդրմամբ: Այս ծրագրով Կապանում հիմնվում է տարածաշրջանից հավաքված պլաստիկ թափոններից շինանյութի արտադրություն, որն իր տեսակով նորություն է 3այաստանում:

– 2016թ. նոյեմբերի 4-ին Գորիսում, կառավարության ղեկավարի հետ հանդիպման ժամանակ, հայտարարվեց, որ «արդեն իսկ մշակվել է Սյունիքի զարգացման ռազմավարությունը»: Գիշտն ասած մենք ծանոթ չենք այդ փաստաթղթին, քանի որ չի հրապարակվել: Բայց կուզենայինք իմանալ՝ Կապանին առնչվող ի՞նչ սկզբունքային հարցեր են տեղ գտել այդ փաստաթղթում:

– Փաստաթուղթը հրապարակվել է, եւ Կապանում դրա վերաբերյալ հանրային քննարկում է եղել, որին անդրադարձել է նաեւ Ձեր թերթը: Այն դեռեւս նախագծի կարգավիճակում է, ուղարկվել է համապատասխան գերատեսչությունների հաստատմանը: Դա 2017-2025 թվականների մարզի զարգացման ռազմավարությունն է՝ ներկա իրավիճակի վերլուծությամբ, ընդհանրացված ուղղություններով, հիմնախնդիրներով, գործողությունների առաջարկով, բնականաբար, յուրաքանչյուր փոքր խնդիր է ծրագիր պետեղ առանձնացված չէ, այն չպետք է նույնացնել մարզի սոցիալտնտեսական զարգացման ծրագրի հետ, այնտեղ կոնկրետ Կապանի մասով ընդգրկված են 2 խոշոր ծրագրեր՝ օդանավակայանի գործարկումը եւ վերակառույց՝ պլաստիկից շինանյութ ստանալու ծրագիրը:

– Այդ օրը հայտարարվեց նաեւ՝ «առաջիկայում մարզի հինգ քաղաքներում ստեղծվելու են վթարավերականգնողական նոր ծառայություններ, որոնք կապահովեն նոր աշխատատեղեր»: Կապանում ստեղծվե՞ց այդ ծառայությունը, թե՞ ոչ:

– Կապանում ստեղծվելու է մեկնաբանական ծառայությունն արդեն իսկ քանի տարի է գործում է՝ իբրեւ կոմունալ ծառայության 4 բաժիններից մեկը՝ իր հստակ գործառնություններով: Այլ հարց է, որ այստեղ կա մշտապես տեխնիկական վերագինման, աշխատանքների ընդլայնման եւ առավել արդյունավետության խնդիր, որի ուղղությամբ աշխատանք է տարվում:

– Ի դեպ, նույն հանդիպման ընթացքում հայտարարվեց, որ աշխատանքներ են տարվում «Կապանում ռետինե նյութերի վերամշակման եւ խողովակների արտադրության երկու գործարան հիմնելու համար», որոնք եւս կապահովեն մի քանի տասնյակ աշխատատեղեր: Վեց ամիս անց կարո՞ղ ենք իմանալ, թե ինչ է կատարվել այդ ուղղությամբ:

– Ինչ վերաբերում է այդ ուղղությանը մեր գործառնություններին, քաղաքապետարանի կողմից եւ մասավոր անձի կողմից դրա համար տրամադրվեցին հողատարածքներ, եւ որքանով տեղյակ են՝ գործարանի մոդուլային կոնստրուկցիաները պատվիրված են: Մյուս մանրամասները կարող է հայտնել Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրման հիմնադրամը:

Խմբագրության կողմից

«Սյունյաց երկիր» թերթի հարցերի պատասխանները, քաղաքապետարանի առաջարկությամբ, գրի է առել քաղաքապետարանի աշխատակիցը՝ առանց մեր լրագրողի մասնակցության. հրապարակում ենք առանց որեւէ միջամտության: Թվերի մի քանի աղավաղում պարունակող պատասխաններին կանոնադառնանք՝ ժամանակ լինելուս պես: ■

Նախագահի նախաձեռնում 334-ի եւ 337-ի միջեւ ստորագրվել է քաղաքական կոալիցիա կազմավորելու մասին հուշագիր

ՀՈՒՇԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈԱԼԻՑԻԱ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3այաստանի 3անրապետական կուսակցությունը եւ 3այ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը՝ վերահաստատելով 2016 թվականի փետրվարի 24-ին երկու կուսակցությունների միջեւ կնքված քաղաքական համագործակցության մասին համաձայնագրին իրենց հավատարմությունը եւ նրանում ամրագրված դրույթների կատարման պատասխանատվությունը, հաշվի առնելով 2017 թվականի ապրիլի 2-ին կայացած 33 Ազգային ժողովի ընտրության արդյունքները, համադրելով 3այաստանի 3անրապետական կուսակցության եւ 3այ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության 2017 թվականի ապրիլի 2-ի Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ներկայացրած նախընտրական ծրագրերը, կարեւորելով 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական բարեփոխումներով սկսված համակարգային եւ որակական փոփոխությունները խորացնելու եւ անշրջելի դարձնելու անհրաժեշտությունը, առաջնահերթ համարելով հասարակության մեջ պետության եւ ապագայի հանդեպ վստահության ու լավատեսության հիմքերի ստեղծման նպատակով նոր որակի իշխանության ձեւավորումը, նպատակ ունենալով կառավարության կազմում երկու կուսակցությունների համատեղ ջանքերով ապահովելու մարդու անվտանգ ու բարեկեցիկ կյանքը՝ ձեւավորում են քաղաքական կոալիցիա եւ քաղաքական պատասխանատվություն են ստանձնում կառավարության ողջ գործունեության համար:

1. 3ամագործակցության ռազմավարական նպատակները

- 1.1. Ամբողջացնել մարդու արժանապատվության անխախտելիության ու իրավունքի գերակայության սկզբունքների լիարժեք իրականացումը երաշխավորող մարդու իրավունքների ու ազատությունների ապահովման համակարգը:
- 1.2. Կառավարման խորհրդարանական ձեւին անցնելու այս փուլում, 3այաստանի 3անրապետության Սահմանադրությանը համահունչ եւ միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ, ձեւավորել համապատասխան օրենսդրություն:
- 1.3. Ապահովել հանրային իշխանության բոլոր մարմինների թափանցիկ, հաշվետու եւ արդյունավետ աշխատանքը՝ ձեւավորելով սահմանադրական նոր կարգից բխող ներդիշխանական հարաբերություններ:
- 1.4. Նպաստել քաղաքական կուսակցությունների միջեւ մրցակցության, հանդուրժողականության եւ համագործակցության մթնոլորտի խորացմանը, կուսակցությունների ներքին ժողովրդավարության զարգացմանը:
- 1.5. Երաշխավորել 3այաստանի 3անրապետության եւ Արցախի 3անրապետության ընդհանուր անվտանգությունը:
- 1.6. Արտաքին հարաբերություններում առաջնորդվել բացառապես ազգային-պետական շահերով:
- 1.7. Ապահովել հայ ժողովրդի լիարժեք եւ անմիջական մասնակցությունը հայոց պետականության ամրապնդման գործում՝ վերաբերելով հայության տարբեր հատվածների դերն ու նշանակությունը:

2. Քաղաքական կոալիցիայի առաջնահերթությունները

- 2.1. Նոր թափ հաղորդել հակակոռուպցիոն պայքարին եւ արժանիքահեճ կարգային քաղաքականությանը:
- 2.2. Սահմանել արդյունավետ կառավարման չափորոշիչներին համապատասխանող կառավարության նոր կառուցվածք եւ գործունեության կարգ:
- 2.3. Ամբողջացնել ազգ-բանակ հայեցակարգը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հայրենական գիտական եւ տեխնոլոգիական մտքի վրա հիմնված ռազմարդյունաբերական համակարգի ստեղծմանը:
- 2.4. Շարունակել կատարելագործել ընտրական համակարգը:
- 2.5. Ձեւավորել կայուն զարգացում ապահովող սոցիալական շուկայական տնտեսական համակարգ, վե-

րանայել իրականացվող սոցիալական քաղաքականությունը:

2.6. Սահմանել այնպիսի կարգավորումներ, որոնք կբացառեն բնական ռեսուրսների գերշահագործումը, նվազագույնի կհասցնեն շրջակա միջավայրի, այդ թվում՝ մարդու կյանքի եւ առողջության վրա բացասական ազդեցությունը, կապահովեն բնական ռեսուրսների արդյունավետ կառավարումը եւ դրանց նկատմամբ վերահսկողությունը:

3. Քաղաքական կոալիցիայի գործունեության եւ կազմակերպման կարգը

- 3.1. Քաղաքական կոալիցիոն համագործակցությունը վերաբերում է կառավարության ողջ գործունեությանը:
- 3.2. Քաղաքական կոալիցիայի կողմերն առաջնորդվում են փոխադարձ հարգանքի, փոխըմբռնման, հանդուրժողականության, տարածայնությունները բանակցությունների եւ քննարկումների միջոցով լուծելու մոտեցումներով՝ հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության ամբողջական պատասխանատվության գիտակցմամբ:
- 3.3. Քաղաքական կոալիցիայի կողմերը քաղաքական պաշտոնները միմյանց միջեւ բաշխում են խորհրդակցությունների միջոցով ձեռք բերված համաձայնությամբ: Վարչապետի առաջարկման իրավունքը պատկանում է 3այաստանի 3անրապետական կուսակցությանը:
- 3.4. Քաղաքական կոալիցիայի կողմերը մինչեւ համապատասխան պաշտոնի համար թեկնածու ներկայացնելը՝ այն ներկայացնում են կոալիցիայի մյուս կողմին:
- 3.5. Քննարկումների արդյունքում տվյալ կուսակցությանը վերապահված պաշտոնում կարող է նշանակվել միայն տվյալ կուսակցության կողմից առաջարկված թեկնածուն:
- 3.6. Թեկնածուի առնչությամբ մյուս կուսակցությունը կարող է ներկայացնել դիրքորոշումներ, որոնք հրապարակման ենթակա չեն:
- 3.7. Քաղաքական կոալիցիայի կողմերը պարտավորվում են.
 - 3.7.1. Սահմանադրության փոփոխությունները, սահմանադրական օրենքները ընդունել համախոհությամբ: Կողմերը պետք է ձգտեն այլ հարցերի շուրջ որոշումները եւս ընդունել համախոհությամբ:
- 3.7.2. 3անախոհություն չձեւավորվելու դեպքում քաղաքական կոալիցիայի կողմերը, պահպանելով փոխադարձ հարգանքի, փոխըմբռնման, հանդուրժողականության նորմերը, կարող են հրապարակայնորեն ներկայացնել իրենց դիրքորոշումները: 3անախոհության բացակայության դեպքում, անկախ իրենց դիրքորոշումից, կողմերը պարտավոր են ապահովել ընդունված որոշման իրագործումը իշխանության բոլոր մակարդակներում եւ օղակներում:
- 3.7.3. 3ամագործակցության կողմերից մեկի առաջարկությամբ քննարկման առարկա դարձնել 3այաստանի 3անրապետության Ազգային ժողովի եւ կառավարության գործունեությանը վերաբերող ցանկացած հարց:
- 3.7.4. Քաղաքական կոալիցիայի աշխատանքների արդյունավետության, կանոնավոր միջկուսակցական շփումների ապահովման եւ տեսակետների համադրման նպատակով ձեւավորել կոալիցիոն խորհուրդ, որն իր գործունեությունը իրականացնում է պարբերաբար հրավիրող նիստերի միջոցով: Կողմերի համաձայնությամբ կարող են ձեւավորվել նաեւ մարզային խորհուրդներ:
- 3.8. Քաղաքական կոալիցիայի կողմերի միջեւ սկզբունքային տարածայնությունների առաջացման դեպքում դրանք լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում կուսակցություններից յուրաքանչյուրը, մյուս կողմին գրավոր տեղեկացնելով, կարող է դուրս գալ կոալիցիայից:
- 3.9. Քաղաքական կոալիցիա կազմավորելու մասին սույն հուշագիրը գործում է մինչեւ 6-րդ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ավարտը:

3այաստանի 3անրապետական կուսակցության նախագահի տեղակալ Արմեն Աշոփյան 3այ Յեղափոխական Դաշնակցության կուսակցության Գերագույն մարմնի ներկայացուցիչ Աղվան Վարդանյան

11.05.2017 president.am



Դեռևս վաղ է Մեղրու բժշկական կենտրոնում կատարված դեպքի վերաբերյալ օբյեկտիվ եզրահանգում անելը

Մայիսի 10-ին Մեղրու տարածաշրջանի մոտ 300 բնակիչ բաց նամակով դիմել է ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանին, որի շարժառիթ է հանդիսացել երկու անգամ անախատապետ Մուրեմ Սարգսյանի՝ ապրիլի 30-ին Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնում գրանցված մահը: Նամակում մասնավորապես նշվում է, որ նորակառույց բժշկական կենտրոնում մեղ մասնագետների պակասի, եղած մասնագետների թերեւս ոչ բավարար պատրաստվածության հետևանքով օրերս դժբախտ դեպք գրանցվեց: Նրանք խնդրում են վարչապետին ուսումնասիրել բուժաօգնությունում ստեղծված իրավիճակը եւ միջոցներ ձեռնարկել՝ պարզելու՝ ինչու է տարածաշրջանային նշանակություն ունեցող հիվանդանոցում այդպես էլ չեն լուծվում այնքան կարեւոր կարգադրությունները, եւ եկած որակյալ երիտասարդ կադրերը, «չդիմանալով մրցակցությանը», արագ լքում են Մեղրին:



Ստեղծված իրավիճակի վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտեց Մեղրի բազմաբնակավայր համայնքի ղեկավար Մխիթար Ջաքարյանը: Նա նախեւառաջ նշեց, որ հանրապետության գրեթե բոլոր շրջանային հիվանդանոցներում մեղ մասնագետների կարիք կա: «12 հազար բնակչության սպասարկող առողջապահական կենտրոնը, ֆինանսական վիճակից, այդ համայնքում մեղ մասնագետները չեն ելնելով, բոլոր պահանջները բավարարելու հնարավորություն չունի»:

Ինչ վերաբերում է կոնկրետ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին, ապա նորակառույց կենտրոնը, որ ստեղծվել է Ազգային եւ Մեղրու հիվանդանոցների միավորմամբ, իր կահավորմամբ, հագեցվածու-

լուրջ մասնագետներ են եւ փրկել են շատերի կյանքը: «Եթե ստեղծված իրավիճակից հետո վիրաբույժ Արտաշեսյանը որոշի հեռանալ Մեղրու բժշկական կենտրոնից, դա համայնքի համար մեծ կորուստ կլինի», - իր մտահոգությունը հայտնեց Մ.Ջաքարյանը եւ հավելեց, որ տարիներ առաջ իր կնոջ կյանքը փրկել է Կապանի հիվանդանոցի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի նախկին վարիչ Սամվել Միկոյանը, ում վերջերս մեղադրում էին ծննդկանի մահվան մեջ:

Ինչպես տեղեկանում ենք «Հրապարակ»-ի «Բժշկի սխալի մեղավորը երկրի տնտեսական վիճակն է» վերտառությամբ հոդվածից. «Ըստ դատաբժշկի նախնական եզրակացության՝ Սուրեն Սարգսյանը մահացել է աղտոտված սնունդից: Առողջապահության նախարար Լևոն Ալթունյանն էլ ասում է. «Սրտի տամպանաղան այնպիսի դիագնոզ է, որ եթե անելիքայն տրաքում է, նույնիսկ եթե մի երեք բրիգադ լվացված-կանգնած լինեն վիրահատարանում, հիվանդին դժվար կլինի փրկել»:

Ինչպես, ցավալի դեպք է տեղի ունեցել, բայց նախքան բժշկին մեղադրելը մի պահ կանգ առնենք եւ հիշենք, որ նա նաեւ բազում կյանքեր է փրկել: Թերեւս այս հարցի վերաբերյալ վերջնական դիրքորոշում արտահայտելու համար սպասենք փորձաքննության եզրակացությանը: Բայց այն, որ շրջանային հիվանդանոցները մեղ մասնագիտական կադրերով համարվելու համար կառավարությունը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկի, դա լինի օրենքի ուսով կամ աշխատավարձի բարձրացման ու այլ նպաստավոր պայմաններ ստեղծելով, անվիճելի փաստ է:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հիշարարկն ապրում է սերունդների հիշողության մեջ...

Եղիցի լույս մահապարտ կամավորականի հիշատակին

Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում հյուրնկալվեցի Արցախյան ազատամարտում ակտիվ, անձնուրաց դերակատարություն ունեցած տղաներից մեկի՝ Արայիկ Սիմոնյանի հայրական տանը:



Արայիկը փառքով է պսակել իր անունը հայոց այս վերջին ազատագրական մաքառումների ընթացքում: Պատերազմում վաստակել էր իր պատվավոր մականունը՝ Ուրալ Արո: Մարտնչել է բազմաթիվ վայրերում: Նա առաջիններից էր, որ ունկնդիր եղավ ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի հայտնի կոչին եւ զինվորագրվեց մահապարտների գումարտակին: Արայիկի գործունեության բուռն տարիները եղան հենց պատերազմի սկզբնական շրջանը՝ 1990-1992 թվականները, երբ ամեն ինչ հայկական կողմին ծանր ու դժվար էր տրվում: Պատերազմն առաջ բերեց անսպասելի դժվարություններ ու խոչընդոտներ: Դրանք հաղթահարելու համար մեր տղաները հաճախ անմահադեպ անձնուրացություն ու անձնագոհություն էին դրսևորում՝ երբեք չդողալով իրենց կյանքի համար:

Արայիկը՝ Ուրալ Արոն, ճիշտ այդպիսի անձնագոհ, նվիրյալ մարտիկ էր՝ կյանքն ամբողջովին հայրենիքին մատաղացու արած այր: Նա հար է նման էր 19-րդ դարավերջի հայ ֆիդայիներին, ովքեր կրակե շապիկ հագած բարձրացել էին Արևմտյան Հայաստանի լեռները եւ «Մահ կամ ազատություն» կարգախոսով կռիվ հայտարարել սուլթան Համիդի բռնապետությանը: Հայ ժողովրդի երջանկության «Բրաբիոն» ծաղիկը որոնող խենթերն էին նրանք՝ Արաբոյից, Սպահանցի Մակարից, Գեւորգ Զառուչից, Աղբյուր Սերոբից, Անդրանիկից մինչեւ Փեթարա Իսրո: Հայ ֆիդայիների այդ փառապանծ փառանգն արհամարհած ուներ սեփական կյանքը՝ միայն թե ազատագրվեր սիրասուն հայրենիքը: Հայ մեծամունտ գրող Մուշեղ Գալշյանը նրանց կյանքի եւ սիրանքի վերաբերյալ հետևյալ խորունկ բանաձեւումը տվեց. «Հայ ֆիդայիների ըմբոստ ճակատը մենք դեռ պետք է համբուրենք...»:

20-րդ դարավերջին՝ Արցախի լեռներում հայտնվեցին հայոց նորոյա ֆիդայիները՝ կամավորական-ազատամարտիկները: Նրանց նշանաբանը նույնն էր. «Մահ կամ ազատություն»: Հայ կամավորական ազատամարտիկն իր անձնագոհությամբ բնավ չէր զիջում 19-րդ դարավերջի հայ ֆիդայիներին: Հայրենիքի սիրով արբեցած խենթերը միշտ էլ որոնել են ու դեռ կորոնեն հայոց երկրի երջանկության Բրաբիոն ծաղիկը:

Արայիկ Սիմոնյանն այդ խենթերից մեկն էր: Մահապարտ կամավորականը բազմաթիվ անձնագոհ գործողությունների է մասնակցել Արցախի լեռներում եւ պարզապես հրաշքով կենդանի մնացել:

Մահապարտ հարկ եղած զենքն ու զինամթերքն էր հասցնում անձնավտանգավոր վայրերում գտնվող ազատամարտիկներին: Եշմարիտ է նկատված, որ նա ամեն անգամ անցնում էր կյանքի եւ մահվան մագլանների վրայով եւ վերոնշյալ անձնագոհ արարքները կատարում էր այնպես, կարծես իր ուղեղն էլ նույնպես գրահապատված էր...

Ուրալ Արոն 1993 թվականի փետրվարին «Արծիվ մահապարտների» գումարտակի հրամանատարության հատուկ առաջադրանքով մեկնեց ռազմաճակատի թեժ գիծ՝ Զլդրան: Ճանապարհին նա անհավասար մարտերի մեջ մտնելով թշնամու հրոսակախմբերի հետ, այնուամենայնիվ, կարողանում է այնքան անհրաժեշտ զենքն ու զինամթերքը հասցնել պաշարման մեջ գտնվող ազատամարտիկներին: Այդ հերոսական, անվեհեր գործողության ընթացքում Արայիկը ծանր վիրավորվում է, ստանում ողնաշարային լուրջ վնասվածքներ, զանգուսկրի կտրվածք: Առաջին բուժօգնությունը ստանալուց հետո նրան տեղափոխում են Երեւան, որտեղ անհրաժեշտ ապաքինում է ստանում եւ կրկին վերադառնում ռազմաճակատ: Այս անգամ նա մասնակցում է Լաչինի ուղղությամբ ծավալված մարտական գործողություններին:

Պատերազմի ավարտից հետո Արայիկը մի որոշ ժամանակ մնում է զինվորական ծառայության մեջ, սակայն ստացած վերքերն իրենց զգալ են տալիս: Երկու անգամ, ՊՆ միջամտությամբ, մեկնում է արտասահման՝ բուժման: Գերմանիայում բժշկվելու փորձում են նրա առողջական վիճակը կայունացնել, սակայն ապարդյուն: Հետզհետե ողնաշարի ցավերը դառնում էին անտանելի:

Արայիկ Սիմոնյանը վախճանվեց 2015 թվականի մարտի 10-ին, Երեւանում՝ հիվանդանոցում: Հուրակավորվեց հերոսների վերջին հանգրվան հանդիսացող «Եռաբլուր» պանթեոնում: Տապանքարին գրված է. «Ուրալ Արո. 1960-2015թթ.- Մահապարտ»:

Մի ապսպես ավարտվեց հայրենիքին նվիրված մի կյանք եւս: Արայիկ Սիմոնյանի անունը հավերժացրել է որպես խորհրդանշական հայրենիքի պաշտպանությանը մինչեւ վերջ զինվորագրված եւ զոհաբերված կյանքի:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱԴՊԵՏՅԱՆ
պարմաբան, հրապարակախոս

Նա իր «Ուրալ» մականիչի բեռ-

Ֆիլմ-հուշարձան՝ ապրիլյան պատերազմում զոհված 13 սյունեցի հերոսների մասին

Արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով 2016 թվականի ապրիլի 2-ին հակառակորդը սկսել էր լայնածավալ հարձակողական գործողություններ: Կասեցնելով թշնամու նախահարձակ գործողությունները՝ հայկական կողմն ունեցավ 104 զոհ, 104 սխարնք, որոնց մասին կիսուս են սերունդները:

Քառօրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված «13» վավերագրական ֆիլմը պատմում է 104 հերոսից 13 սյունեցիների մասին՝ Արմեն Զովհաննիսյան, Էդուարդ Ալեքսանյան, Սեդրակ Ասրյան, Գագիկ Փարսադանյան, Արմեն Գասպարյան, Սերգեյ Դանդյան, Եղիշե Նիկոլայան, Կարո Դանբարձունյան, Մայիս Միրզոյան, Արմեն Բեգլարյան, Դավիթ Սարգսյան, Նարեկ Մկրտչյան, Նորայր Գասպարյան: Վերջին երկուսը ժամկետային զինծառայողներ են, մյուսները՝ կամավորներ:

Ֆիլմը նկարահանվել է Սյունիքի Ջարգացման եւ ներդրումների հիմնադրամի նախաձեռնությամբ, Ջանգեզուրի պլանմոնիթեմային կոմբինատի աջակցությամբ՝ Paradiplomacy Production-ի կողմից: «Մոսկվա» կինոթատրոնում մայիսի 14-ին տեղի ունեցավ ֆիլմի շնորհանդեսը, որին ներկա էին ապրիլյան պատերազմի զոհերի հարազատները, զինվորականներ, քաղաքական, հասարակական, մշակութային գործիչներ:

«Ֆիլմում չկա քաղաքականություն, պարզապես հարգանք է հիշատակի տուրք է մեր այն հերոսներին, որոնց արյան, կյանքի գնով կարողացանք պահել մեր նվաճումները», - Panorama.am-ի հետ զրույցում ասաց Սյունիքի մարզպետ, Սյունիքի Ջարգացման եւ ներդրումների հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Վահե Դավթյանը:

Նա նշեց, որ ֆիլմի շնորհանդեսը նախատեսված էր ապրիլյան քառօրյա պատերազմի տարեկիցին, սակայն, հաշվի առնելով նախընտրական շրջանը, զեթո մնալով հնարավոր տարատեսակ եւ տարաբնույթ շահարկումներից, որոշեցին այն անել ապրիլի ուշ:

Սյունիքի Ջարգացման եւ ներդրումների հիմնադրամի տնօրեն Դավիթ Աբովյանն ասաց, որ իրենց նպատակն է այս ֆիլմով ցույց տալ, որ միշտ հիշում են հերոսներին, հպարտանում նրանցով, նրանց ընտանիքներով: Նա տեղեկացրեց, որ ֆիլմը թարգմանվելու է տարբեր լեզուներով եւ ներկայացվելու է վավերագրական ֆիլմերի տարբեր փառատոների:

Ֆիլմը նկարահանվել է Սյունիքի մարզում եւ Արցախում: 1 ժամ տևողությամբ ֆիլմում 13 հերոսների հարազատները պատմում են նրանց մասին, նրանց կյանքի վերջին օրերի, ժամերի մասին: Կամավորների հարազատների խոսքերում առանձնակի շեշտվում էր՝ լսելով պատերազմի մասին, հենց առաջին իսկ րոպեին առանց վարանելու ատում էին՝ «գնում ենք Արցախ, պատերազմ է»:

Սցենարի հեղինակ, լրագրող Արեն Մկրտչյանն ասաց, որ ցանկացել են ստանալ ֆիլմ-հուշարձան, որպեսզի հերոսների սխրանքը միշտ հիշվի:

«1 ժամվա մեջ ամփոփել ենք 14-ժամյա զրույց զոհվածների հարազատների հետ: Բարդ էր նրանց հետ շփումը, այդ ամենը նորից էին վերապրում:

Նկարահանման պրոցեսը բավականին բարդ ու դժվար անցավ»,- նշեց Ա.Մկրտչյանը:

Ֆիլմը դիտելուց հետո մարդիկ լուռ եւ թաց աչքերով էին դուրս գալիս դահլիճից, դժվարանում էին խոսել:

«Ծանր ֆիլմ էր: Տղաները բոլորն էլ արժանի էին մեծարման, հարգանքի: Բոլորն էլ արժիվ տղաներ էին», - ասաց արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկ Սեյրան Բաղդասարյանի կինը՝ Արշալույս Բաղդասարյանը, ում դստեր ամուսինը՝ Արմեն Գասպարյանը, զոհվել է ապրիլյան պատերազմում:

Արմեն Գասպարյանին ներկայացրեց ազնիվ, հպարտ, համարձակ սյունեցի. «Երբ պատերազմը սկսվեց, նա հաշմանդամ էր, պահեստագործի ավագ լեյտենանտ էր: Ոչ մի րոպե չվարանեց ու առաջինը մեկնեց թալիշ, որտեղ կնքեց իր մահկանացուն հատուկ հանձնարարություն կատարելիս»:

Նորայր Գասպարյանի մայրը՝ Նունե Աթաջանյանը, շնորհակալություն հայտնեց Սյունիքի մարզպետ Վահե Դավթյանին այս ֆիլմի համար: «Մեր երեխաներին ապրեցնում են: Ինձ հետ ներկա մեր հերոսների մայրերը, կանայք, մույնպես տպավորված են», - ասաց տիկին Նունեն:

Նորայրի մասին դժվարացավ խոսել: Արցունքները թույլ չէին տալիս: Միայն կարողացավ ասել. «Իմ Նորոն տաղանդով տղա էր: Երկու ամսից ավարտելու էր ծառայությունը, տուն վերադառնար: Ափսոս մեր երեխաները: Այնպիսի սերուցք գնաց, որ ...»:

Ֆիլմի դիտմանը ներկա մշակույթի նախարար Արմեն Ամիրջանը բարձր գնահատեց ֆիլմի գեղարվեստական արժեքը, բայց ընդգծեց. «Երանի այլես նման ֆիլմեր նկարահանելու առիթ չունենանք»:

«Իրապես, ռեժիսորական բարձր, հետաքրքիր լուծումներ էին գտնված, կինեմատոգրաֆի հետաքրքիր լուծումներով էր արված ֆիլմը: Բայց կրկնում են՝ երանի այլես նման ֆիլմ նկարելու առիթ չունենանք», - հավելեց նա:

Նախարարը նշեց, որ այն, ինչ կատարվեց անցած տարի ապրիլին, այս ֆիլմը եւ արվեստի մյուս ճյուղերով անդրադարձները պետք է դառնան մատաղ սերնդի համար հերոսության, հերոսաբար դաստիարակելու, նրանց հերոսություն մղելու օրինակ:

Հարցին, թե հնարավոր է մշակույթի նախարարության պատվերով ապրիլյան պատերազմի մյուս հերոսների մասին ֆիլմեր նկարահանվեն, Արմեն Ամիրջանն ասաց. «Խոսում էինք այս մասին Սյունիքի մարզպետի հետ: Թերեւս մենք նախաձեռնենք շարունակությունը: Յուրաքանչյուր մարզի ղեկավար իր մարզի զոհված տղաների մասին անդրադարձ անելու է: Մենք խոսեցինք ավելի համակարգելու առումով, նկարահանված ֆիլմերը, որոնք ավելի գեղարվեստական բարձր որակի են, փորձենք փառատոնային տարբեր մասնակցություններ ապահովել: Կարծում են՝ դրանով իսկ լուրջ քաղաքական դիվիդենտներ կարող ենք շահել»:

**panorama.am
14 մայիսի 2017թ.**

Լավագույն թափրոնների ներկայացումների կազմակերպումը Սիսիան, Գորիս, Կապան, Քաջարան, Ագարակ եւ Մեղրի քաղաքներում:

Ինչպես բացման արարողությանը նշեց Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արթուր Գաբրիելյանը, դեռեւս 20 տարի առաջ «Թատերական Սյունիք» փառատոնի հիմքը դրեց ՀՀ ժողովրդական արտիստ Երվանդ Դազանյանը, իսկ այսօր այդ բարի ավանդույթը շարունակում է ՀՀ թատերական գործիչների միության նախագահ, արվեստի վաստակավոր գործիչ Հակոբ Դազանյանը: Ա.Գաբրիելյանի խոսքով՝ փառատոնը հնարավորություն կտա մեկ հարկի ներքո հավաքվել, «վարակվել» թատրոնով եւ վայելել հանրապետության թատրոնների լավագույն ներկայացումները:

Բացման խոսքով հանդես եկավ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, ով կարեւորեց փառատոնի անցկացումը եւ նշեց, որ սա երկար սպասված եւ գեղեցիկ առիթ է առնչվելու հանրա-

Գրական Սյունիք

Վարուժան Գալստյան



Ծնվել է 1953թ. Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Վերիշեն գյուղում:

1970-1974թթ. սովորել է Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի ֆակուլտետում:

1974-1975թթ. ծառայել է բանակում: 1975 թվականից աշխատել է Ազգային ակադեմիայի հաշվողական կենտրոնի Գորիսի լաբորատորիաներում որպես գիտաշխատող: Եղել է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի հայցորդ: Ֆիզ-մաթ. գիտությունների թեկնածու է:

1994 թվականից աշխատել է սոցիալական ոլորտում: 1998 թվականից Գորիսի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրենն է: Ամուսնացած է, ունի երկու տղա, մեկ աղջիկ եւ երեք թոռ:

² PÊ² ԾՃԱՄ՝ Ա Էàòð

Նայրենիքս էր... որի սեզ սարին Նոյի տապալնը բախտումով նարեց... Նայրենիքս էր... որի սահմանը Նանիթ թշնամին անդադար հարեց:

Նայրենիքս էր... որի այրումին Մարտապի տարածեց աշխարհից աշխարհի Քաջարի կովեց պարերազմներում Նայրենիքսն իր դարձնելով նշխար...

Նայրենիքս էր... ուր կովի պահին Պաշարված բերդում դարձրեց գործեց...

Նայրենիքս էր... որը գիտության Անդադարաններն իր բանաբարով օժեց:

Իմ հայրենիքի զավակներն օժտված Մեծերի հեղ միշտ հպարտ քայլեցին...

Իրենց վաստակը աշխարհին տալով Լեզնեղը հայի պարտով հյուսեցին...

Ու ինչքան էլ որ չար ուժերը գործ ֆորձեն երկիրն իմ կործանել անդու, Այն ծաղկելու է դրախտի նման... Նայրենիքսն էր աշխարհին ի լուր...

ԱՄà úð°ðÆ օՍò Ծ² è°È

Բոլորը՝ ասող, Լսողը՝ չկա՛վ: Դարձած անհավար... Բարձրալը՝ վկա...

Ծ² î ² î Æè Ê² àÜ օØ î² - ԱàòØ

Ջարմանայի է՝ ո՛նց եմ ես սպրում՝ Մարդկային հոգսը ուներիս ստած... Ո՛նց եմ դիմանում այսքան ցավերին՝ Տանելով խաչն իմ՝ ինձ վերուստ փրկած...

Երկրի անօրեն բարբերն անենուր Գամել եւ մարդկանց լույն անհույս կերին, Եվ ես՝ անհույսս, մեջս ուժ գրած, Կորով եմ փայլիս հուսահարներին...

Ես հավարի՛ եմ կոչում ամենքին... Ու կրկնում հաճախ՝ դիմանալ է պետք...

Որ կգա օրը մեծ դարաւարակի՝ Նեռու կենտրեթ խորանն այս անպետք...

Միշտ զարմանում եմ՝ ո՛նց եմ ես սպրում՝

Աշխարհի հոգսը ուներիս ստած... Ո՛նց եմ դիմանում այսքան ցավերին՝ Տանելով խաչն իմ՝ ինձ վերուստ փրկած...

ÈàòÙÈÀ՝ òðĬ àòÀÜàòÜ

Կյանքում ինչ ասես, Որ չկարարվեց, Նույնիսկ անկշիռ Նույսը կշռվեց...

Պարզվեց, որ լույսը Ջանգված է՝ մասնիկ, Ի ծնե թեև Մեռում է ախր...

Երկերեսակի Նույսը՝ հայրնություն, Մեր կյանքի համար՝ Նավեթ՝ փրկություն...

ԾØ² ՍòÆ, òàèî² î² òÀ... Ĭ ÈÆÜ օØ

Դու շար ես ուզում փոստաբար դառնալ, Իմ անհուն սերը՝ արդիս մեջ պահած, Բերեմ թեզ համար սիրո կամակներ Արեթից ինչպես ու սիրահարված...

Ես ո՛նց կարող եմ թեզ չնկարելիվել... Նույնիսկ պարտասար եմ որպես փոստաբար, Բո նամակները թեզ հեղ ընթերցել, Խիկող կիսելով՝ ես ուրախանալ...

Բայց ես ուզում եմ, որ դու իմանաս՝ Ինչքան էլ սիրով պաշտեմ թեզ հավեր, Պարտախանները այդ կամակների Ես՝ փոստաբարս, չեմ տանի երբեք...

àò%àòØ օØ ¶ Û² È

Խանդավառ հեղով ուզում եմ գնալ Նայրենից սիրուն սարերը ելնել, Նրանց լանջերին վեհանձն կանգնած Ժայռերի փեշին կարողով բազմել...

Ուզում եմ գնալ դաշտերին այցի, Կանաչ խորերի բուրբուրը շնչել: Բյուր ծաղիկների գույնից շրջած, Նրանց հեղ սիրով երկար գրուցել...

Ուզում եմ գնալ անտառը փարթամ, Նրա կուսական խորքերը րեւանել, Նեւելով կաղնու՛ն՝ խոնավ ու մաւտուր, Տնքոցը կրա դարավոր լսել...

Ուզում եմ գնալ ձորերը լռիկ, Նրանց պարտրած ծերպերին նարել, Այնտեղ թափառող զովաշունչ քամու Ջանախիդ սուլոց երգին ձայնակցել...

Նոգսերս թողած ուզում եմ գնալ - Անորոշ հեռուն՝ ասանակից անդին, Եվ գուցե այնտեղ հանկարծ հանդիպեմ՝ Վաղուց կորցրած իմ երազներին...

Մեկնարկեց «Թատերական Սյունիք» փառատոնը

Մայիսի 19-ին Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնում մեկնարկեց ՀՀ մշակույթի նախարարության եւ «Հրայր եւ Աննա Զովնանյան» բարեգործական հիմնադրամի հովանավորությամբ ու Սյունիքի մարզպետարանի աջակցությամբ Հայաստանի թատերական գործիչների միության նախաձեռնությամբ կազմակերպված «Թատերական Սյունիք» փառատոնը, որի գլխավոր նպատակն է հանրապետության



«Աշոտ Խաչատրյանը ներկայացնում է»

Կապանի արվեստի պետական քոլեջի փոխտնօրեն, թավջութակահար Աշոտ Խաչատրյանը շարունակում է դասական երաժշտություն պրոպագանդելու իր առաքելությունը: Մայիսի 22-ին արվեստի քոլեջի Վահագն Ստամբուլյանի անվան երգեհոնային դահլիճում տեղի ունեցավ «Աշոտ Խաչատրյանը ներկայացնում է» խորագիրը կրող դասական երաժշտության համերգը՝ Կապանի արվեստասեր հասարակության համար: Նման խորագրով մի համերգ նա կազմակերպել էր մեկ տարի առաջ՝ նպատակ ունենալով համախմբել կապանյան ծագում ունեցող եւ տեղի լավագույն երաժիշտ-կատարողներին: Երաժիշտներ էին հրավիրված նաեւ մայրաքաղաքից: Բացման խոսքում Ա.Խաչատրյանը կարեւորեց նման միջոցառումների դերը դիմորդների մասնագիտական կողմնորոշման գործում:

Համերգը սկսվեց հայ միջնադարյան հոգեւոր երաժշտության գանձարանի լավագույն նմուշներից մեկի՝ Գրիգոր Պաղիադուրի «Ով զարմանալի» տաղով՝ փոխադրված լարային քառյակի համար: Այնուհետեւ միմյանց հաջորդեցին դասական եւ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարումները: Հնչեց Մոցարտի սոլո միմոր դաշնամուրային կվարտետի առաջին մասն արվեստի քոլեջի այս տարվա շրջանավարտ,

միջազգային մրցույթի դափնեկիր Մերի Պետրոսյանի մասնակցությամբ: Ջութակահարուհի, միջազգային մրցույթի դափնեկիր Անի Փարսադանյանը հնչեցրեց եղվարդ Բաղդասարյանի «Ռապսոդիան», Մարգարիտա Սահակյանը (վոկալ)՝ եղվարդ Աբրահամյանի «Ես հիշում եմ աչերը քո» ռոմանսը: Հանդիսականի ջերմ ծափերին արժանացավ ՀՀ ֆիլհարմոնիկ նվագախմբի ջութակահար Վահե Փարսադանյանը, ով կատարեց Յոհաննես Բրամսի ռեմիսոն «Հունգարական պարը»: Կապանի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցի դասատու, երգչուհի Հասմիկ Մարտիրոսյանի եւ Վահե Փարսադանյանի մեկնաբանմամբ հնչեց «Սիրո անուրջներ» ստեղծագործությունը (նվագակցող՝ Շուշան Գետրոյան):

Համերգի երգացանկն այնպես էր կազմվել, որ հնչեին տարբեր երաժշտական գործիքներ: Երեւանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի նվագախմբի ավտահար Հայկազ Կարապետյանը հանդիսականին հրամցրեց Ալ.Ֆրեդ Շնիտկեի «Պոկան»: Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանավարտ Վիգեն Հովհաննիսյանը (շվի, դուդուկ) լարային քառյակի հետ հնչեցրեց Կոմիտասի «Չինարես» եւ «Հարբբան» ստեղծագործությունները: Լարային քառյակը կատարեց Կոմիտաս - Ասլամազյանի «Ալ ալուխս» եւ «Վաղարշապատի

պար» ստեղծագործությունները: Այնուհետեւ հնչեց արգենտինացի կոմպոզիտոր Աստոր Պիացոլլայի «Մոռացում» ստեղծագործությունը:

Վերջում Վահե Փարսադանյանը կատարեց Վիվալդիի «Տարվա եղանակներ» շարքից «Ամառ» կոնցերտը: Համերգի մասնակիցներին նվագակցեց Երեւանի Չայկովսկու անվան մասնագիտական դպրոցի դասատու, դաշնակահար եւ երգեհոնահար Արմեն Աղաջանյանը:

Համերգի ավարտին Ա.Խաչատրյանը երախտագիտություն հայտնեց բոլոր այն անձանց, ովքեր նպաստեցին համերգի կայացմանը, մասնավորապես հովանավորներին, որոնց մեծամասնությունն արվեստի քոլեջի (նախկին երաժշտական ուսումնարան) շրջանավարտներ են՝ Վլադիմիր Վարդապետյան, Սասուն Առաքելյան, Սամվել Ավանեսյան, Արմինե Հովհաննիսյան, Սիրան Արշակյան, Նվարդ Պիպոյան, Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրեն Վարդան Քոչարյանին՝ օժանդակության համար: Աշոտ Խաչատրյանը նաեւ հանդգնեց հայտնեց, որ նման միջոցառումների անցկացման համար հովանավորներ կգտնվեն, քանզի միտված են երիտասարդության գեղագիտական ճաշակի ձեւավորմանը եւ ընդհանրապես այն խնդիրների իրականացմանը, որ դրված են արվեստի քոլեջի առջեւ:

- Նման համերգներն ինձ դրական լիջքեր են հաղորդում, մասնավորապես երբ ելույթ են ունենում մի քանիստ երեւելի, ծնվել են երեւանում, բայց, ինչպես ասում են, արմատները ձգում են, - իր զգացումները ներկայացրեց Վահե Փարսադանյանը:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Հավերժ փառք Հայրենական մեծ պատերազմի մասնակցած վաղատուրքիներին

Հայրենական մեծ պատերազմի մասնակից վաղատուրքիները միշտ գնահատված ու հարգված են գյուղի բնակչության կողմից: Այդ մասին վկայում են հերոսներին նվիրված ամենամյա միջոցառումներն ու փարբեր հավաքները:

Հաղթանակի տոնի առթիվ, համայնքի պատվավոր քաղաքացի Քաջիկ Բաբաջանյանի նախաձեռնությամբ պատերազմից վերադարձած եւ Վաղատուրքում հաստատված յուրաքանչյուր վետերանի պատվին, գյուղում՝ հաղթանակի հերոսներին

նվիրված «Թթու ջուր» կոչվող հուշակոթողի տարածքում այս տարի տնկվեց մեկական ծառ:

Հայրենամեծեր գաղափարի իրականացման գործում իր ներդրումն ունեցավ Տեղ համայնքի ղեկավար Ներսես Շադունցը՝ տրամադրելով 40 տնկի: Եռօրյա աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին Հովհաննես Հովհաննիսյանը, Ռազմիկ Խաչատրյանը, Մասիս Մկրտչյանը, Միքայիլ Առաքելյանը, Յուրիկ Միրզոյանը, Խաչիկ Ամիրջանը: Բացի ծառատունկից կատարվեցին նաեւ տղավարի վերանորոգման, գետանցի կամրջի նորոգման, պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձանի ներկման եւ հարդարման աշխատանքներ:

ՄԻՇԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հայրենական մեծ պատերազմի վերերան, ՀՀ վաստակավոր ուսուցիչ

ՎԱՅՐԱՍ ՕՐԻՔԱԹ

Կապանի արվեստի պետական քոլեջը կապարում է 2017-18 ուսարավա ընդունելություն

- դաշնամուր,
- լարային գործիքներ (ջութակ, ալտ, թավջութակ, կոնտրաբաս),
- փողային գործիքներ (ֆլեյտա, կլարնետ, շեփոր, տրոմբոն),
- ժողովրդական գործիքներ (շվի, դուդուկ, քանոն, թառ),
- երգեցողություն (դասական եւ ժողովրդական երգ),
- երգչախմբավարություն,
- երաժշտության տեսություն,
- էստրադային երգարվեստ,
- դերասանական արվեստ,
- պարարվեստ,
- գեղանկարչություն,
- դիզայն,
- կիրառական զարդարվեստ եւ ժողովրդական արհեստներ,
- քանդակագործություն մասնագիտությունների գծով:

Ընդունելությունը կկատարվի ցերեկային բաժնում /առկա ուսուցում/ ուսուցման անվճար եւ վճարովի համակարգերում: 9-րդ դասարանն ավարտած ընդունվողները կսովորեն ուսուցման անվճար համակարգում:

Ընդունվել կարող են միջնակարգ եւ ոչ լրիվ միջնակարգ կրթություն ունեցող այն դիմորդները, ովքեր հաջողությամբ կհանձնեն ընդունելության քննությունները:

Դիմումներն ընդունվում են մինչեւ հուլիսի 13-ը: Ընդունելության քննությունները անց կկացվեն հուլիսի 15-ից օգոստոսի 20-ը:

Բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողները պետական պատվերի շրջանակում ստանում են 4750 դրամ կրթաթոշակ:

Շրջանավարտները ստանում են պետական մոնիթինգի դիպլոմ:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ տեղում:

Հասցեն՝ ՀՀ, ք.Կապան, Ռ.Մելիքյան 2
Հեռ.՝ (+374 285) 2 48 91, (+374 77) 02 63 20:

Մեկնարկեց «Թափերական Սյունիք» փառատոնը

7 պետության լավագույն թատրոնների հետ: «Կապանը թատրոնով ապրող, թատրոն սիրող քաղաք է, եւ ակնկալեմք, որ կազմակերպիչները մասնատիպ նախաձեռնություններով ավելի շատ հանդես կգան: Հուսամ՝ թատերական խմբերը Կապանից կհեռանան մեծ բավականությամբ եւ կրկին այստեղ վերադառնալու ցանկությամբ», - մասնավորապես ասաց համայնքի ղեկավարը:

Գորիսի Վ.Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն, ՀՀ վաստակավոր արտիստ Շանթ Հովհաննիսյանը, կարեւորելով փառատոնի անցկացումը, նախեառաջ շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին, այնուհետեւ հույս հայտնեց, որ սա հետագայում կազմակերպվելիք «Թափերական մեծ Սյունիք» փառատոնի սկիզբը կլինի, որտեղ կներառվի նաեւ Արցախը: Նա նշեց,

որ դեռես 10 տարի առաջ է մտահոգացվել այս նախաձեռնությունը: Փակումը տեղի կունենա մայիսի 27-ին Գորիսում, որտեղ էլ, հուսով ենք, հաջորդ տարի կտրվի «Թափերական մեծ Սյունիք» խորագրով փառատոնի մեկնարկը:

Սյունիքի մարզպետարանի մշակույթի եւ սպորտի բաժնի պետ Սարգիս Դավթյանը նշեց, որ այս փառատոնը մարզի մշակութային կյանքի կարեւորագույն իրադարձություններից է:

Փառատոնի կազմակերպիչ, Թափերական գործիչների միության նախագահ Հակոբ Դազանյանը նշեց, որ Սյունիքի մարզի ընտրությունը պատահական չէր, քանի որ այստեղ գործում է երկու պետական թատրոն: Սա տարածաշրջանում գործող թատրոնների խնդիրները վեր հանելու եւս մեկ հնարավորություն է: «Հույս ունեն, որ այս փառատոնը թատրոն այցելելու լրացուցիչ առիթ

կհանդիսանա, քանի որ առանց հանդիսատեսի, առանց հանդիսականի պաշտպանության թատրոնների վիճակը վատ կլինի: Քաղաքում թատրոն ունենալը մեծագույն պատիվ է, եւ, կարծում են, ժամանակի ընթացքում հանդիսականը կշարունակի հասկանալ մշակութային այս օջախների կարեւորությունը», - մասնավորապես նշեց Հակոբ Դազանյանը եւ հորդորեց հանդիսականներին իրենց ներկայությամբ օգնել թատրոնին շնչել: Նա կոչ արեց մարզի գործարարներին, արդյունաբերական ընկերություններին էլ ավելի մեծ ուշադրություն դարձնել այստեղ գործող թատրոններին, աջակցել նրանց խնդիրների լուծմանը:

«Թափերական Սյունիք» փառատոնի մեկնարկը տրվեց Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի «Սիրային քառանկյունի» կատակերգական դրամայով՝ Հակոբ Դազանյանի բեմադրությամբ:

Եվ այսպես, 9 օր շարունակ հանրապետության տասը թատերախմբի ներկայացումները հնարավորություն ստացան վայելել մարզի վեց քաղաքում:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՎԻՉ «ՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ»

ՍԱՀՄԱՆՓՈՒԿ ՊՆՏԱՍԽԱՆՎՈՒԹՅԱՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ՇԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

ՌՆՁՆԻՍՏԱՆԻ ՈՒՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԳՈՎԱԶՐԱԿԱՆ ՆՅՈՒՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ՝ ՕՒՄ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 1730, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 25.05.2017թ.: